

Գ Լ Ո Ւ Ռ Ի Ս

Վերլուծական տեղեկագիր

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Г Л О Б У С

Аналитический бюллетень

НАЦИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

№ 1

Մայիս, 2008թ.

---

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Цели развития и что нам следует выбирать .....	4
О ситуации на мировых финансовых рынках .....	8
Հայաստան – Իսրայել հարաբերությունները. ներկան և հեռանկարները .....	11
Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը. ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը .....	15
Ծպտյալ քրիստոնյաներ Թուրքիայի կրթական համակարգում .....	22
Программа «национальный туризм»: возможный подход к консолидации армянства .....	25
Բրուքինգի ինստիտուտ. զարգացող աշխարհում պետության թուլության ինդեքս-2008թ. ....	28

## ЦЕЛИ РАЗВИТИЯ И ЧТО НАМ СЛЕДУЕТ ВЫБИРАТЬ

Хоть и говорил Козьма Прутков, что «нельзя объять необъятное», но именно этим и заняты государства-члены ООН в своей повседневной деятельности. Повестка работы этой уникальной международной организации включает в себя все сферы жизнедеятельности человечества. Так что по роду деятельности мне приходится сталкиваться с опытом развития многих стран мира. При рассмотрении соответствующих вопросов повестки дня крайне полезен богатый научный и практический материал, имеющийся в нашем распоряжении. Он свидетельствует, что ничто не ново на этом свете: проблемы, стоящие сегодня перед нашим обществом, идентичны тем, с которыми сталкивались и сталкиваются практически все развивающиеся страны на протяжении всех 63 лет деятельности ООН. Безусловно, помимо вопросов, касающихся мира и глобальной безопасности, самым важным направлением деятельности организации является «развитие». Именно в решении этой задачи наиболее четко проявляются различия, которые государства демонстрируют в процесс своего становления и исторического развития. На примере большинства развивающихся стран мира можно убедиться, что сам процесс «взросления» еще никак не гарантирует социально-экономического развития страны. В этой статье позволю себе поделиться некоторыми соображениями относительно «развития».

Само понятие «развития» включает в себя различные сферы деятельности общества. Задачи социального развития, экономического развития, политического развития, демократического развития, культурного развития актуальны сегодня во всех странах мира. В некоторых из них, составляющих меньшинство, императивы развития диктуются необходимостью дальнейшего подъема уровня жизни и удовлетворения новых потребностей и запросов общества. В других же странах, которые составляют большинство и где проживает более 70% населения мира, решение некоторых из вышеуказанных задач порою определяет само существование человека и государства.

Споры относительно первоочередности реализации перечисленных задач развития не прекращаются. Часть «законодателей» общественного прогресса ратует за первичность политического развития. Другая часть, составляющая, по всей вероятности, большинство, более озабочена проблемами экономического развития.

Эта дилемма не случайна: политика и экономика являются двумя наиболее важными и определяющими факторами современного общества, и их взаимообусловленность особо актуальна для правильного определения целей и очередности реализации задач развития. Как демонстрирует опыт многих стран, их оптимальное сочетание, а именно правильное определение соответствующих приоритетов и времени их реализации, создает предпосылки для прогресса. Вместе с тем, неправильный набор предпочтений обрекает страны на стагнацию и хроническую бедность.

Для ясности позволю себе краткий теоретический экскурс.

Современная политическая экономика определяет пять целей развития. Две следующие цели преследуют решение задач экономического характера:

1. рост экономики.
2. обеспечения справедливости (*equity*).

Традиционное толкование роста экономики подразумевает рост валового национального продукта (ВВП) на душу населения. Эта цель была провозглашена приоритетной во всем развивающемся мире сразу после деколонизации африканского континента и стран Азии. Однако вскоре выяснилось, что экономический рост сам по себе практически не отразился на улучшении условий существования населения этих стран. Более того, после приобретения независимости, большинство населения бывших европейских колоний скатилось в бездну нищеты и, оказавшись в ловушке бедности, не может оттуда выбраться до сих пор. Как следствие этого, задачи «распределения» и «справедливости» выдвинулись на первый план. Не случайно с конца 1970-х задача обеспечения «справедливости» приобрела такую же значимость, как и задача обеспечения экономического роста.

Обеспечение «справедливости» подразумевает в свою очередь решение двух следующих подзадач:

- сокращение крайней бедности, т.е. доли населения, имеющего годовой доход не ниже определенного минимального уровня.
- сокращение неравенства, т.е. уменьшение разницы уровня доходов наиболее нуждающихся и наиболее богатых слоев населения.

После деколонизации в процессе государственного строительства в развивающемся мире разгорелись также дебаты о первичности демократии в противовес стабильности. Так, с конца 1950-х и начала 60-х многие практики и эксперты, занимающиеся задачами стран «третьего мира», в качестве пред условия развития обозначили обеспечение демократии, подразумевая под этим исключительно модели западной либеральной демократии. Однако с конца 60-х задача политического порядка и стабильности, несколько отодвинув на второй план актуальность обеспечения демократии, стала предметом особой озабоченности. Таковой она оставалась до начала 80-х, когда, с крушением некоторых «ведущих» авторитарных режимов Азии и Латинской Америки, проблема перехода к демократическому правлению опять выдвинулась на первый план.

Таким образом, императив политического развития общества определил, в свою очередь, следующую группу задач:

3. задача демократического развития
4. задача обеспечения стабильности

Отдельно стояла пятая задача одновременно и политического и экономического характера – задача обеспечения автономности государства. Под этим подразумевалось обеспечение возможностей государства для полноправного контроля всего комплекса своих национальных задач. Вполне естественно, что с процессом деколонизации именно эта задача приобрела особую важность, и часто ее реализация имела место за счет решения экономического и демократического развития.

Вместе с чередованием приоритетов развития, менялись также требования и пред условия предоставления финансовой и технической помощи развивающимся странам со стороны стран-доноров и международных финансовых институтов (МФИ).

Не случайно, что перед политиками всегда стояла задача оптимального определения приоритетов и очередности их реализации. Спрос соответственно порождал предложение со стороны исследователей, изучающих эту тематику. По указанной проблематике можно выделить три основные школы, доминирующие в современной политэкономии.

Так, либеральная школа декларирует полную совместимость и, следовательно, возможность одновременной реализации вышеуказанных задач политического и экономического развития. Логика этой концепции довольно проста: экономический рост приводит к постепенному и более «справедливому» распределению доходов и богатства, что является незаменимым пред условием развития демократических институтов, и, тем самым, уменьшению условий для социального конфликта внутри общества и обеспечению правопорядка и стабильности. В конечном итоге такое развитие создаст обществу предпосылки для полного контроля над «своими национальными делами». Стран, которые успешно реализовали такой сценарий, к сожалению, крайне мало, и к таким странам позднего развития традиционно относят Японию и, с некоторой натяжкой, Коста-Рику.

Вторая школа подчеркивает конфликтность вышеуказанных целей и, следовательно, невозможность одновременной и успешной реализации задач экономического и политического развития: все хорошее не может происходить одновременно.

Третья школа призывает к необходимости выработки такой методологии развития, которая позволила бы «примирение» имеющихся противоречий между всеми началами развития. При этом подчеркивается, что если одновременное решение экономической и политической составляющих развития невозможно, то прогресс обеспечивается посредством правильного определения приоритетов и путей их решения.

С.Хантингтон, один из ведущих политологов современности, выразил конфликтность отношений между экономическим ростом, с одной стороны, и неравенством, стабильностью, демократией и автономией, с другой стороны, через так называемый «парадокс роста». Согласно этой закономерности, высокий уровень переменной «А» (экономический рост) ассоциирует-

ся с высоким уровнем переменной «В» (это может быть показатель неравенства, стабильности или демократичности общества). Но высокий темп роста переменной «А» не только не предполагает непременный рост переменной «В», но и может способствовать уменьшению последней. На самом деле, как свидетельствует опыт развивающихся стран и переходных экономик, высокие темпы роста экономики на нынешнем этапе преобразований не всегда способствуют решению таких задач как сокращение неравенства, обеспечение стабильности или развитие демократии. Указанный конфликт между ростом экономики, с одной стороны, и равенством, стабильностью и демократией, с другой стороны, привел к оспариванию логики либеральной теории развития, о которой я вкратце упомянул выше.

Вместе с тем, примечательно, что все политологические школы практически едины в своем мнении относительно первичности обеспечения стабильности и порядка по отношению к демократии.

Стабильность в развивающихся странах обеспечивалась различными методами политического регулирования. Не вдаваясь в детали, можно сказать, что их смысл заключался в ограничении политического участия.

Алексис де Токвиль в середине 19-го века в своем бессмертном труде «Демократия в Америке» отметил, что «среди законов, правящих человеческим обществом есть один, который кажется более точным и ясным, чем все остальные. Если люди должны оставаться цивилизованными или стать таковыми, то искусство их ассоциирования друг с другом должно расти и совершенствоваться в той же степени, в которой растут условия для равного участия»<sup>1</sup>. Развивая эту идею, С.Хантингтон предположил, что причиной политической нестабильности во многих развивающихся странах является именно невыполнение этого пред условия: равенство возможностей политического участия растет намного быстрее, чем «искусство ассоциирования друг с другом». Социально-экономические и политические изменения, а именно урбанизация, доступ к образованию, свобода прессы и доступность информации развивают политическое сознание и расширяют возможности для политического участия, тем самым размывая традиционные устои власти. В итоге темпы социальной мобилизации и расширения политического участия оказываются высокими, а темпы политической институционализации низкими. Такой сценарий в конечном итоге чреват политической нестабильностью и беспорядками. Не случайно практически все новые независимые государства после долгих экспериментов по политической либерализации общества предпочли стабильность большей демократии.

Вместе с тем понятно, что длительное ограничение политического участия может поставить под вопрос легитимность властей со всеми вытекающими последствиями. Именно поэтому, временное ограничение политического участия должно как-то «компенсироваться» и «оправдываться». Как показывает опыт развития таких стран как Южная Корея, Тайвань (КНР), Сингапур, легитимность правящих режимов обеспечивалась за счет высоких темпов и *качества* экономического роста. Результаты социально-экономического развития указанных стран наглядно демонстрируют качественные различия экономического роста. В отличие от традиционного толкования экономического роста, влиятельная школа современных экономистов включает в понятие экономического развития четыре компонента: новые инвестиции, обеспечивающие реальное увеличение дохода на душу населения; создание и развитие межотраслевых связей; качественный рост производительности труда в ведущих отраслях промышленности; переход на производство экспортно-ориентированных товаров и услуг со все более высокой добавочной стоимостью. В вышеуказанных странах политическим режимам удалось обеспечить экономический рост, отвечающий всем указанным критериям. С другой стороны, политическая институционализация общества предшествовала широкому вовлечению масс в политический процесс. Несомненно, инкорпорация широких слоев в политическое участие имела место и в Южной Корее и Тайване (КНР), но только после 10-15 лет интенсивного экономического роста и беспрецедентной индустриализации. Посредством такого сочетания приоритетов развития этим странам Юго-Восточной Азии удалось правильно определить и сопоставить приоритеты, решив тем самым и задачи социально-экономического развития и задачи политического развития.

---

<sup>1</sup> Alexis deTocqueville, «Democracy in America».

Вполне понятно, что не всякое ограничение политического участия автоматически обеспечивает аналогичные результаты. Опять-таки, как показывает опыт развития большинства развивающихся стран, их элиты также пытались разработать условия, которые, по их замыслу, должны были обеспечить как политическую стабильность через воспроизводство правящих элит, так и экономическое развитие. Однако «правила игры» обеспечили всего лишь реализацию политической составляющей проекта за счет решения задач долгосрочного социально-экономического развития. Согласно мнению экономиста Д.Валднера, «кажущиеся сильные лидеры оказались в собственной институциональной ловушке»<sup>1</sup>.

Применительно к Армении можно сказать, что правильность определения приоритетов дальнейшего развития обуславливает возможности решения стоящих общенациональных задач. Успешная геополитическая конкуренция с ресурсообеспеченным Азербайджаном предполагает внутривнутриполитическую стабильность с одновременным обеспечением качественного роста национальной экономики. Задел последних 7-8 лет экстенсивного экономического роста в условиях финансовой стабильности создал предпосылки для обеспечения качественно нового уровня экономического роста. Доклады Всемирного Банка и Международного валютного фонда иллюстрируют достигнутые успехи и одновременно подсказывают актуальные задачи по реализации реформ следующего поколения.

Эксперты из МФИ обращают внимание на трудности поддержания высоких темпов роста в долгосрочной перспективе из-за ограниченных возможностей экстенсивного развития. Есть широкое согласие среди экономистов, что «запустить» экономический рост и поддержать его в долгосрочной перспективе – две довольно различные задачи. Первая требует пакета реформ, цель которых, в конечном счете, не «задушить» налогом имеющийся потенциал экономики. Вторая же задача намного сложнее, т.к. требует создания надежной и продуманной институциональной основы для поддержания динамизма экономики и обеспечения ее эластичности для погашения возможных внешних шоков в долгосрочной перспективе. Общепринято, что эти задачи предполагают совершенствование функционирующих и создание новых эффективных институтов, дальнейшее улучшение предпринимательской среды и обеспечение свободной конкуренции, проведение сбалансированной финансово-денежной политики, закрепление и гарантирование прав собственности, укрепление независимости судебной системы и борьбу против коррупции.

Опыт развивающихся стран наглядно демонстрирует, что существует множество вариантов реализации указанных принципов посредством различных институциональных «упаковок». Существующий институциональный ландшафт определяет как возможности, так и ограничения в выборе пакета реформ. Каждая «упаковка» имеет свою цену и обеспечивает соответствующую отдачу в зависимости от множества факторов, в том числе имеющихся финансовых, политических ресурсов и ограничений, а также уровня административной компетентности государственного аппарата. С этой точки зрения искусство реализации реформ предполагает правильный выбор целей реформы из практически безграничного набора сочетаний институциональных заготовок. Концепция, представленная видным экономистом Д.Родриком<sup>2</sup>, предполагает идентификацию наиболее серьезных и неотложных «узких мест», препятствующих более эффективному функционированию экономики, и, соответственно, реализацию мер по их «расшивке». Такая стратегия позволит более рационально использовать имеющиеся ресурсы и осуществить более эффективный мониторинг реализуемых мероприятий и оценку их конечных результатов.

*Армен Мартиросян*

---

<sup>1</sup> *David Waldner, State Building and Late Development.*

<sup>2</sup> *Dani Rodrik, One Economics, Many Recipes.*

## О СИТУАЦИИ НА МИРОВЫХ ФИНАНСОВЫХ РЫНКАХ

Анализ и оценка последних событий, происходящих на мировом финансовом рынке, показывает, что в последние месяцы ситуация, резко обострившись, начинает склоняться к развязке, результатом которой, по оценкам ряда аналитиков, может стать введение в действие принципиально новой модели мировой валютной системы. Эксперты особо подчеркивают, что развязка финансового кризиса сопровождается острым противостоянием в среде мировой элиты.

Указанное противостояние в первую очередь проявляется на валютном и фондовом рынках. Иначе говоря, эти рынки, представляющие наиболее подвижную часть мировой финансовой системы, раньше других показывают приоритетные направления ее развития.

С этой точки зрения заслуживает внимание желание многих стран уйти из-под влияния доллара США, переориентировать структуру своих золотовалютных резервов в другие мировые валюты (фунт, евро, йена) или ввести новые валютные инструменты (типа «Динара Залива» стран Персидского региона). В настоящее время этот процесс еще только набирает силу. И хотя значительная часть резервов стран мира все еще номинирована в долларах США, явно просматриваются тенденции по ее общему снижению.

Технологически изменение структуры резервов в современных условиях может произойти только на биржах. Поэтому задача контроля компонентов мировой биржевой системы приобретает основное значение.

В последние годы наблюдалось активизация деятельности американского капитала по деформации валютного и фондового рынка Западной Европы. Лидером этого процесса являлись американские биржи NYSE и NASDAQ, пытавшиеся приобрести лондонскую LSE и шведскую OMX, но, встретив противодействие, переориентировали свои интересы на Дубайскую биржу, что также свидетельствует о том, что в мировой финансовой системе действуют, как минимум, 2-3 мощные группировки (американская, европейская, азиатская), интересы которых не всегда совпадают. Наличие, во всяком случае, двух противоборствующих групп явно проявилось в конфликте за контроль над Лондонской фондовой биржей.

В начале 2007 года в СМИ появилась информация о том, что десятка крупнейших банков мира, под руководством CitiBank, заявила о своем желании создать собственную электронную фондовую биржу. Это заявление было сделано на фоне нарастающей инициативы ведущих американских бирж (NYSE и NASDAQ) по приобретению региональных фондовых бирж, буквально в первые дни после объявления о предстоящем слиянии американской биржи NYSE и европейской EuroNext. Указанный факт интересен тем, что объединению этих бирж жестко противостояло большинство европейского финансового мира. Против него выступали и ряд ключевых политиков континентальной Европы. Уже тогда в среде аналитиков стал обсуждаться вариант сценария, согласно которому в мировой финансовой элите произошел раскол вокруг понимания будущего мировой финансовой системы и роли и места в ней американского доллара. Наиболее ожесточенная борьба развернулась за контроль над Лондонской фондовой биржей (LSE), однако результат этой борьбы до настоящего времени остается неопределенным. В этой связи среди аналитиков появилась такая версия, что и Россия оказалась втянутой в конфликт элитарных финансовых групп, в качестве инструмента давления на ту из групп, которая представлена Лондоном, как мировым финансовым центром: обострение отношений России и Великобритании совпало с обострением конкуренции в мировой финансовой элите.

Интересно также и то, что сама инициатива ряда финансовых структур по поглощению региональных фондовых площадок активизировалась на фоне стремительного падения курса доллара США по отношению к другим мировым валютам, а также на фоне столь же

стремительного роста совокупного долга США, который по ряду оценок достиг величины в 40-50 триллионов долларов.

Видимым инструментом реализации политики одной из таких групп являются крупнейшие мировые биржи (NYSE и NASDAQ), а также спекулятивные инструменты в виде различных хедж-фондов. Инструментами другой элитарной группы являются крупнейшие банки.

Именно эти инструменты и были использованы в нарастающей борьбе в среде мировой финансовой элиты.

Сразу за заявлением группы банков о своем желании создать с 1 января 2008г. собственную биржу, последовали достаточно агрессивные действия в отношении, одного из крупнейших и старейших банков Европы – ABNAmro. В результате агрессивных действий со стороны миноритарных акционеров в лице хедж-фондов банк был доведен практически до банкротства.

Ответными действиями банкиров стало серьезное осложнение деятельности NASDAQ по установлению контроля над биржевой группой OMX. По некоторой информации, ряд банков через подставные ближневосточные фонды пытался помешать этой сделке.

Однако с осени 2007г. против группировки в мировой финансовой элите, представленной крупнейшими банками, началась массированная атака, известная в СМИ под названием «американский ипотечный кризис». Результатом атаки стало то, что ведущие мировые банки (включая Citibank) были практически разорены: по информации пресс-службы Citibank по итогам 2007г. вынужден списать более 20 миллиардов долларов убытков, понесенных банком в результате развития «ипотечного кризиса», банк Merrill Lynch заявил о списании более 15 миллиардов долларов.

Столь внушительные потери крупнейших и наиболее влиятельных банков мира аналитиками оцениваются весьма не однозначно. Особую тревогу вызывает тот факт, что банки, которые сегодня понесли убытки, сами стояли у истоков выстроенной ими пирамиды ипотечных бумаг и полностью контролировали всю иерархию отношений по этим финансовым инструментам. Результатом этого кризиса помимо всего прочего стало также и то, что банки так и не смогли реализовать проект создания собственной биржи.

Аналитики обращают внимание и на тот факт, что среди десятка крупнейших мировых банков, тесно завязанных на существующие сегодня в мировой финансовой системе «пузыри» необеспеченных бумаг (поскольку сами и участвовали в формировании этих «пузырей»), есть банки (например, J.P.Morgan Chase & Co.), которые хотя и снизили в 2007 году основные финансовые показатели своей деятельности, но не только не понесли существенных убытков, но и получили прибыль по итогам года. Аналитики отмечают, что подобные расхождения в финансовых показателях для первой десятки мировых банков, указывают лишь на один факт – использование инсайдерской информации о предстоящем кризисе. А это в свою очередь говорить о неоднородности элитарной группы, представленной банковским сообществом.

Тяжелое положение крупнейших банков позволило соперничающей группировке практически без проблем завершить сделки по поглощению ряда региональных бирж, включая и поглощение биржевой группы OMX. По этой сделке 5 января т.г. получено одобрение акционеров.

Кроме того, в условиях осложнения своего финансового положения, банки вынуждены искать дополнительные средства для возмещения понесенных потерь. Средства банками могут быть получены главным образом путем продажи акций компаний в инвестиционных портфелях банков, однако уже с середины января на фондовом рынке был спровоцирован очередной кризис, результатом которого стало резкое падение котировок акций, что затруднило банкам продажу собственных пакетов акций с целью покрытия понесенных убытков.

Можно предположить, что мировая финансовая элита достаточно четко осознает и оценивает то состояние, в котором находится мировая валютная система сегодня: правила, положенные в основу действующей мировой финансовой системы, в последние годы все отчетливее дают сбой, и надо принимать меры с тем, чтобы в случае краха удержать контроль над мировой финансовой системой в своих руках. Пока единственным и наиболее действенным инструмен-

том является организация управляемых финансовых кризисов, которые в последние месяцы стали достаточно регулярными и даже с тенденцией учащения: 8-9 месяцев год-два назад, 4-6 месяцев – в последнее время. Однако этот инструмент способен лишь оттянуть развязку.

Развитие кризиса, собственно и привело к образованию групп («банковская» с центром в Лондоне, «биржевая» - с центром в Нью-Йорке, и «азиатская» с центром в Китае), противостоящие между собой по вопросу стратегии выхода из сложившейся ситуации, а также по вопросу дальнейшего контроля над мировыми финансами.

В целом, ситуация на мировом финансовом рынке в январе 2008г. показывает, что противостояние в мировой финансовой элите за контроль над будущей мировой валютной системой вступает в завершающую фазу – от того, как из сложившейся ситуации смогут выйти крупнейшие банки, будет зависеть и дальнейшая ситуация в мировой финансовой системе.

Идеальным решением была бы организация под эгидой ООН представительного международного форума для выработки новых соглашений в мировой финансовой системе, аналогичных Бреттон-вудскому соглашению 1944 г. и учитывающих новые реалии.

Однако, скорее всего, эта возможность уже упущена. Поэтому становятся возможными самые пессимистические сценарии дальнейшего развития: в 20-м веке две мировые войны начинались именно с серьезных дефектов мировой финансовой системе.

*Сергей Гриняев*



## **ՀԱՅԱՍՏԱՆ – ԻՍՐԱՅԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՆԵՐԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Հայաստանի հանրային, գիտական և քաղաքական դիսկուրսում հաստատված սկզբունքի համաձայն՝ մեզանից հարավ և հարավ-արևմուտք ընկած տարածաշրջանն ընդունված է անվանել «Մերձավոր Արևելք» աշխարհաքաղաքական ընդհանուր տերմինով: Հավատարիմ մնալով այս ավանդույթին՝ փորձենք վերհանել և ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության առկա հարաբերություններն ու հեռանկարային զարգացումները մերձավորարևելյան տարածաշրջանային երկրներից մեկի՝ Իսրայելի հետ:

Յուրաքանչյուր առիթով Հայաստանի և Իսրայելի տարբեր մակարդակի քաղաքական և հասարակական գործիչները խոսում են երկու ժողովուրդների նմանության, ինչպես նաև արտահայտվում են երկու երկրների միջև հարաբերությունների բարելավման և որակական նոր մակարդակի անցնելու անհրաժեշտության մասին:

Ցանկացած միջպետական հարաբերություն ենթադրում է դրանց որոշակի փաթեթ, որը ներառում է տնտեսական, մշակութային, քաղաքական, հասարակական և այլ ոլորտների հարցերի ամբողջություն: Միջազգային փորձի համաձայն՝ հարաբերությունները սկսում են համապատասխան երկկողմ պայմանագրի կնքմամբ, որից հետո հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ և դրանցից բխող դիվանագիտական ներկայացուցչությունների փոխանակում, ինչը Հայաստանի և Իսրայելի պարագայում տեղի չունեցավ: Երկկողմ հարաբերությունների հաստատումից ի վեր (1992թ.) մինչև 2007թ. Վրաստանում Իսրայելի դեսպանը, որի նստավայրը Թբիլիսին է, համատեղության կարգով Իսրայելի դեսպանն էր նաև Հայաստանում: 2007թ. մարտից Հայաստանում Իսրայելի նոր դեսպան է նշանակվել Էհուդ Գոլը, որի նստավայրը Երուսաղեմն է: Նշենք, որ Էհուդ Գոլը համատեղությամբ Իսրայելի դեսպան է նաև Ղրղզստանում և Թուրքմենստանում: Մինչև վերջերս նույն պատկերն էր նաև հայկական կողմից. Ֆրանսիայում Հայաստանի դեսպանը համատեղությամբ հանդիսանում էր նաև Իսրայելում ՀՀ դեսպանը (նստավայրը՝ Փարիզ):

Ստեղծված իրավիճակում դժվար է ակնկալել հարաբերությունների խորացում, երբ դեսպանները, ովքեր անմիջականորեն պետք է զբաղվեն խնդրով, ֆիզիկապես գտնվում են ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող երկրից դուրս: Հետևաբար, հարաբերությունների զարգացումն էլ հարցականի տակ է: Ավելին, համեմատելով նախորդ դեսպանների այցերի հաճախականությունը՝ կարելի է արձանագրել, որ հարաբերությունները գնալով հետընթաց են ապրում: Եթե նախորդ դեսպանները, որոնց նստավայրը Թբիլիսին էր, առնվազն ամիսը մեկ, որոշ դեպքերում՝ երկու և ավելի անգամ այցելում էին Հայաստան և հանդիպումներ ունենում պաշտոնական և հասարակական շրջանակների հետ, ապա Էհուդ Գոլը նշանակումից (2007թ. մարտից) ի վեր ընդամենը երեք անգամ է պաշտոնապես այցելել Հայաստան: Մեկ այլ հանգամանք ևս. այցի ժամանակ ոչ բարձրաստիճան պաշտոնյա դիվանագետի (Իսրայելի արտաքին գործերի նախարարության Եվրասիայի վարչության պետի տեղակալի խորհրդական Իսրայել Մեյ Ամին) ուղեկցությունը ևս կարող է որոշակիորեն պատկերացում ստեղծել հարաբերությունների մակարդակի վերաբերյալ:

Ստեղծվում է տպավորություն, որ հարաբերությունների ներկա մակարդակը բխում է երկու պետությունների շահերից: Հայկական կողմի համար Իսրայելի հետ հարաբերությունների խորացումն առնվազն նշանակում է Իրանի և Մերձավոր Արևելքի արաբական երկրների հանդեպ որդեգրել առավել ճկուն քաղաքականություն, ինչն, անխոս, բարդ խնդիր է:

Իսրայելի համար, ըստ էության, շահեկան է այս իրավիճակը, երբ ստեղծվում է Հայաստանի հետ հարաբերությունների պատրանք, ինչը հնարավորություն է ստեղծում անտեսել

Հայաստանի շահերը և որոշ առանցքային հարցերի վերաբերյալ հակառակ դիրքորոշում արտահայտել կամ չարձագանքել: Փոխարենը՝ խորանում և ռազմավարական նշանակություն են ստանում Իսրայելի հարաբերությունները հարևան Ադրբեջանի և Վրաստանի հետ, ինչը չի կարող մտահոգիչ չլինել:

Երկկողմ հարաբերությունների պատրանքն իրականում չի խոչընդոտում տնտեսական ակտիվության որոշակի մակարդակի ապահովմանը: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և Իսրայելի պետության միջև մինչ օրս կնքվել է երկու միջպետական համաձայնագիր՝ Առողջապահության և դեղորայքի բնագավառում համագործակցության (29.10.1998) և Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության (19.01.2000) վերաբերյալ: Վերջին հանգամանքը խթան հանդիսացավ Հայաստանի ներքին շուկա հրեական կապիտալի ներթափանցման և երկկողմ տնտեսական հարաբերությունների հաստատման համար:

Մակայն Իսրայելի պետական վիճակագրական բյուրոյի տվյալների ուսումնասիրությունը նույնպես արձանագրում է երկկողմ տնտեսական հարաբերությունների ցուցանիշների ցածր մակարդակ: Օրինակ՝ երկու երկրների ապրանքաշրջանառության զագաթնակետը եղել է 2005թ., երբ ներկրումը Հայաստանից Իսրայել կազմել է մոտ \$103.2 մլն, որի 103.1 մլն-ը ադամանդի ներկրումից է գոյացել: Ինչ վերաբերում է անցած երկու տարիներին, ապա արձանագրվում է ապրանքաշրջանառության կտրուկ նվազում՝ \$55.6 մլն 2006թ. և \$14.8 մլն՝ 2007թ.: Ցուցանիշների անկում է նկատվում նաև Հայաստան իսրայելական արտահանման ծավալների կտրվածքով. 2005թ. \$99.5 մլն-ի փոխարեն 2007թ. գրանցվել է 34.6 մլն: Պատճառն այն է, որ նվազել է երկու երկրների միջև ապրանքաշրջանառության մոտ 90%-ը կազմող չմշակված ադամանդի ներկրումը, որը մշակվում էր հրեական կապիտալին պատկանող Նոր Հաճնի ադամանդների մշակման գործարանում:

Բացի ադամանդի վերամշակման բնագավառում համագործակցությունից, Իսրայելի և Հայաստանի գյուղատնտեսության ու առողջապահության նախարարություններն իրականացնում են համատեղ ծրագրեր, որոնց մի մասը կատարվում է Իսրայելի արտգործնախարարության կրթական «ՄԱՇԱՎ» միջազգային հատուկ ծրագրի շրջանակներում: 2006թ. (2007թ. տվյալները դեռ ամփոփված չեն) գյուղատնտեսական, գենդերային հարցերին, գիտությանն ու տեխնոլոգիային, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսին վերաբերող դասընթացներին Հայաստանից մասնակցել է ընդհանուր թվով 8 հոգի: Համեմատության համար նշենք, որ Վրաստանից մասնակցել է 46, իսկ Ադրբեջանից՝ 19 մարդ:

Հայ-իսրայելական հարաբերություններում գրեթե լիովին բացակայում է մշակութային համագործակցության շերտը: Երկու հասարակություններն էլ անտեղյակ են իրարից: Եվ եթե Իսրայելում, Սուրբ հողում գտնվող հայկական մշակութային շերտի և վերջին շրջանում ներգաղթած նախկին հայաստանաբնակների շնորհիվ որոշակիորեն ծանոթ են հայկական մշակույթի տարբեր դրսևորումների, ապա մեզ մոտ գրեթե, եթե ոչ ամբողջովին, անծանոթ են «հրեական-իսրայելական» մշակույթին (տարեկան մոտ 500 զբոսաշրջիկ է Հայաստանից այցելում Իսրայել): Ըստ էության, սա այն կետն է, որից կարելի է և պետք է սկսել երկու երկրների հարաբերությունների զարգացումը և հասարակությունների ճանաչումը, քանի որ այս շերտը զերծ է ընդգծված քաղաքական ենթատեքստից:

Իրականում, երկու հասարակությունների պասիվ փոխհարաբերությունների մասին պատկերացում կազմելու համար բավական է այցելել Սփյուռքում, Հայաստանում և Իսրայելում հայ-հրեական համագործակցությանը նվիրված բլոգ, որը կոչվում է «Կենաց-Լեխայիմ» (<http://genats-lehayim.blogspot.com/>): Այն ակտիվանում է (եթե մեկ-երկու արձագանք կարելի է ակտիվություն անվանել) միայն Ցեղասպանության և Հոլոքոստի թեմաներին առնչվող նյութերի քննարկման ժամանակ:

Ցուրաքանչյուր հայ, և ոչ միայն, բազմիցս լսել է մշակութային և հոգևոր ահռելի ժառանգության մասին, որը դարերի ընթացքում կարողացել է կուտակել և ամբողջացնել Հայ Առաքելական եկեղեցին Երուսաղեմում: Ձեռագրերի համաշխարհային նշանակություն ունե-

ցող հավաքածուների կողքին (Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, Փարիզի ազգային գրադարան, Վենետիկի Սբ. Ղազար կղզու մատենադարան, Վիեննայի, Մադրասի, Հալեպի, Բեյրութի, Վաշինգտոնի, Լոս Անջելեսի, Լոնդոնի, Դուբլինի և այլ գրադարանների հավաքածուներ) իր արժեքավոր տեղն է զբաղեցնում Երուսաղեմի Սբ. Հակոբ վանքի Սբ. Թորոս եկեղեցու հայկական ձեռագրերի խոշոր հավաքածուն: Սբ. Հակոբ վանքի ձեռագրատանն են պահվում X-XVIIIդդ. ձեռագրեր, որոնք ստեղծվել են Կիլիկիայի, Ղրիմի, Նոր Ջուդայի, Կոնստանդնուպոլսի և այլ վայրերի հայ վարպետների կողմից: Ձեռագրերի մեծ մասը նվիրաբերվել է տարբեր ժամանակներում Երուսաղեմ այցելած ուխտագնացների կողմից: Այս ամենը միայն մի փոքր մասն է այն համամարդկային նշանակության մշակութային ժառանգության, որ մենք՝ հայերս, ունենք Երուսաղեմում: Մի ժառանգության, որը տարբեր դարաշրջանների և բազմաթիվ սերունդների մտավոր և հոգևոր գործունեության արդյունք է և իր արտացոլումն է գտել Հայկական թաղամասի տեսքով, անմիջապես Երուսաղեմի սրտում՝ Միոն լեռան շուրջ, ու բազմաթիվ վանքապատկան տարածքներով Ավետյաց Երկրում:

Հաջորդ սերունդների առջև այս ժառանգությունը պահպանելու և իրենց փոխանցելու հարցում մենք մեծ պատասխանատվություն ենք կրում: Դարեր շարունակ այդ գործառույթն իրականացրել և շարունակում է իրականացնել Հայ Առաքելական եկեղեցին ի դեմս Երուսաղեմի պատրիարքարանի: Կարելի է փաստել, որ նախորդ ժամանակաշրջաններում սա միակ ճանապարհն էր, սակայն արդեն բավական ժամանակ է, ինչ փոփոխվել են աշխարհաքաղաքական իրողությունները, և այս հարցը նոր որակական լուծումներ է պահանջում, ինչը, ելնելով իր գործառնական առանձնահատկություններից, միայնակ չի կարող իրականացնել Հայ Առաքելական եկեղեցին: Չպետք է մոռանալ, որ հայկական եկեղեցուն պատկանող հարստությունները գտնվում են երկու իրար դեմ պատերազմող քաղաքական միավորների՝ Իսրայելի պետության և Պաղեստինի ինքնավարության տարածքներում, և այս եռանկյունու՝ Իսրայել-Պաղեստին-Հայ Առաքելական եկեղեցի, մեջ չորրորդ խաղացողի՝ Հայաստանի Հանրապետության մուտքը և ճկուն դիվանագիտությունն անմիջականորեն կնպաստեն Հայ Առաքելական եկեղեցու դիրքերի ամրապնդմանը մի կողմից և մյուս կողմից՝ հնարավորություն կտան անմիջական ազդեցություն ունենալ մշակութային և հոգևոր ժառանգության պահպանման հարցում:

Այս ճանապարհով ընթանալու համար նախևառաջ պետք է երկխոսությունը բերել հավասար դաշտ՝ բարձրացնելով միջպետական մակարդակի, այսինքն՝ բացել դիվանագիտական ներկայացուցչություններ, համապատասխանաբար, Երևանում և Երուսաղեմում:

Դեսպանատների բացման անհրաժեշտության օգտին են խոսում նաև այն բազմատեսակ վեճերը, որոնք առկա են Երուսաղի հայկական պատրիարքարանի և Իսրայելի կառավարության, ինչպես նաև Ավետյաց երկրում կրոնադավանաբանական այլ ուղղությունների ներկայացուցիչների միջև: Օրինակներից է ոչ վաղ անցյալում եղած Իսրայելի կառավարության և Հայկական պատրիարքարանի վեճը՝ կապված Իսրայելի և Պաղեստինի միջև բաժանարար պատի կառուցման հետ, որը պետք է անցներ Պատրիարքարանին պատկանող այգիների տարածքով: Այդ անգամ վերջինիս մեծ ջանքերի շնորհիվ հաջողվեց հարցին ընդունելի լուծում տալ, սակայն ապագան ապահովագրված չէ նմանատիպ և այլ մարտահրավերներից:

Երկրորդ վտանգը, որ կախված է Հայկական պատրիարքարանի և հայերի ունեցվածքի գլխին, Իսրայել պետության կողմից խրախուսվող հողերի վաճառքն է հրեաներին, որոնք շատ հաճախ ձևակերպվում են երկարաժամկետ (մինչև 99 տարի) վարձակալությունների տեսքով, որն էլ իր հերթին բերում է առանց այդ էլ Երուսաղեմի փոքրաթիվ հայ բնակչության քանակի նվազմանը: Հողային վաճառքի հերթական փաստի բացահայտումն անմիջապես առաջացնում է լարվածության նոր ալիք հայ համայնքի ներկայացուցիչների և պաղեստինյան արաբների հարաբերություններում: Այս ամենը խնդիրների փոքր շրջանակն է միայն, որոնց իրենց առօրյա գործունեության ընթացքում բխվում են հայ համայնքի և Երուսաղեմի Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչները:

Ամփոփելով պետք է նշել, որ խորհրդային ժառանգության բացասական հետքերից է նաև այն, որ որոշ ռազմավարական կարևորություն ունեցող ուղղություններում ՀՀ արտաքին քաղաքականությունը պասիվ է, լավագույն դեպքում *ռեակտիվ*, մինչդեռ պետք է լինի *ակտիվ*: Նման ուղղություններից է էությամբ ռեակտիվ՝ ՀՀ մերձավորարևելյան քաղաքականությունը: Մինչդեռ Հայաստանը պետք է հանդես գա իր նախաձեռնություններով, ինչի համար անհրաժեշտ գիտական և մարդկային ռեսուրսներն այսօր առկա են Հայաստանի Հանրապետությունում: Մասնագիտական գրականության էջերում մերձավորարևելյան հիմնախնդիրների շուրջ առկա քննարկումները փաստում են մասնագիտական դաշտի կայացածության մասին:

Հայաստանը պարտավոր է ակտիվ մերձավորարևելյան քաղաքականություն վարել, որի համար անկյունաքարային են Իսրայելի հետ հարաբերությունները: Հայաստանի մերձավորարևելյան քաղաքականությունը կարևորվում է առաջին հերթին մերձավորարևելյան շատ երկրներում հայկական համայնքների գոյության հանգամանքով և, ինչն ավելի կարևոր է, այդ համայնքների կողմից պատմության ընթացքում կուտակված զգալի մշակութային ժառանգության համակարգված և պարբերական ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

***Հայկ Քոչարյան***

## ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀՐԵՈՒԹՅԱՆԸ. ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսությամբ առաջնորդվող ֆաշիստական Գերմանիայի կողմից իրականացվեց շուրջ 6 մլն եվրոպական հրեաների ցեղասպանությունը, որը պատմության մեջ մտավ Հոլոքոստ (ողջակիզում, եբրայերեն Հա-Շոա) անվամբ: Պատերազմի ավարտին հաջորդեց Գերմանիայի օկուպացումը հաղթող տերությունների կողմից, կայացան մի շարք կոնֆերանսներ, ուր, ի թիվս հետպատերազմյան Եվրոպային առնչվող բազմաթիվ որոշումների, կայացվեցին որոշումներ Գերմանիայի կողմից վճարվելիք ռազմատուգանքների ձևերի ու չափերի շուրջ:

Մինչև Իսրայել պետության ձևավորումը գերմանական կողմից փոխհատուցումների վճարման հարցը բարձրացվել է 1945թ. սեպտեմբերին չորս օկուպացիոն տերությունների չրեական գործակալության (Jewish Agency) կողմից նրա նախագահ Խաիմ Վեյցմանի (Chaim Weizmann) (որը 1935-1946թթ. նաև Համաշխարհային սիոնիստական կազմակերպության – World Zionist Organization նախագահն էր) հղած հուշագրում, որտեղ պահանջ էր դրվում ընդգրկել այդ հարցը ռազմատուգանքի շուրջ Գերմանիայի հետ տարվող բանակցությունների օրակարգում: Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող առաջին տարիներին, երբ դեռ խիստ թարմ էր Հոլոքոստի հիշողությունը և հրեաները չէին ցանկանում որևէ շփում ունենալ գերմանացիների հետ, Իսրայելի արտաքին գործերի նախարար Մ.Շարեթի 1951թ. սկզբին Գերմանիային ուղղված պահանջը՝ փոխհատուցել (շուրջ \$1,5 մլրդ-ի չափով) նացիստական հետապնդումներից փրկված կես միլիոն հրեաների Իսրայելում վերաբնակեցման հետ կապված ծախսերը, կրկին հղված էր ԱՄՆ-ին, ԽՍՀՄ-ին, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային: Նշված գումարի չափը ձևավորվել էր այն հաշվարկից, որ մեկ ներգաղթողի լիարժեք ինտեգրմանն (աբսորբցիա) ուղղված գործունեությունն արժե \$3000: Հաշվվել էր նաև, որ \$6 մլրդ արժողությամբ հրեական սեփականություն է թալանվել նացիստների կողմից, բայց նաև շեշտվում էր, որ գերմանացիները երբեք չեն կարողանա նյութական փոխհատուցում տալ իրենց այն արարքների համար, որոնց զոհ գնացին միլիոնավոր հրեաներ:

ԽՍՀՄ-ն ընդհանրապես անպատասխան թողեց Մ.Շարեթի պահանջը, իսկ արևմտյան տերություններն այն վերահասցեագրեցին Գերմանիայի դաշնային հանրապետության կառավարությանը: Վերջինիս ֆեդերալ կանցլեր Կոնրադ Ադենաուերի՝ 1951թ. սեպտեմբերին արած պաշտոնական հայտարարության մեջ, որը պատգամավորները լսում էին հոտնկայս և որը հավանության արժանացավ խորհրդարանի պատգամավորական բոլոր խմբերի կողմից, ասվում էր, որ Գերմանիան պատրաստ է վճարել փոխհատուցումներ նացիստական հանցագործությունների համար: Սակայն հրեական ժողովրդի ներկայացուցիչներին ուղղված Ադենաուերի կոչին՝ ԳՖՀ կառավարության հետ այս հարցի շուրջ բանակցություններ սկսելու մասին, Իսրայելի կառավարությունը սկզբում նույնիսկ չարձագանքեց: Ճիշտ է, ի պատասխան այդ կոչին, ընդամենը մեկ ամիս անց, 1951թ. հոկտեմբերին, Նաում Գոլդմանը, որը Հրեական գործակալության համանախագահն էր և Հրեական համաշխարհային կոնգրեսի (World Jewish Congress) նախագահը, Նյու Յորքում կազմակերպեց Արևմուտքի երկրներում գործող 23 հրեական ազգային և միջազգային կազմակերպությունների հավաքը: Վերջինիս մասնակիցները պարզորոշ հասկանալ տվեցին, որ խոսակցությունը կարող է գնալ միայն նյութական փոխհատուցումների շուրջ, ու այդպիսով հանդիպման արդյունքում ստեղծված կազմակերպությունը կոչվեց Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող մարմին կամ կրճատ՝ Պահանջների կոնֆերանս (The Conference on Jewish Material Claims Against Germany – the Claims Conference): Այս նոր կոնֆերանսի Տնօրենների խորհուրդը բաղկացած էր հիմնադիր կազմակերպություններից յուրաքանչյուրի կողմից գործուղված երկուական անդամներից: Ինչպես նշված է նրանց հայտարարության մեջ, Պահանջների

կոնֆերանսը խնդիր ունի բանակցել գերմանական կառավարության հետ ու ստեղծել Գերմանիայի կողմից Հոլոքոստի միջոցով անհատ հրեա մարդկանց և հրեա ժողովրդի նկատմամբ պատճառած նյութական վնասների փոխհատուցումների ծրագիր»:

1951թ. դեկտեմբերին Ն.Գոլդմանը Կ.Ադենաուերի հետ Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ հասավ պայմանավորվածության, որ Մ.Շարեթի ներկայացրած գումարը դառնալու է բանակցությունների առարկա: Սակայն կողմերի վերաբերմունքը բանակցություններին տարբեր էր:

Արևմտյան Գերմանիան, որպես Երրորդ ռեյխի փաստացի իրավահաջորդ, հրեաներին վճարվելիք փոխհատուցումների շուրջ տարվող բանակցությունների մեջ տեսնում էր կարևորագույն քայլ նացիստական անցյալի հաղթահարման ուղղությամբ և մտադիր էր նման կերպ գոնե մասամբ քավել գերմանական ժողովրդի մեղքը: Ըստ կողմերի միջև կնքված համաձայնագրի, գումարները վճարվում էին Իսրայելին որպես փոխհատուցում Հոլոքոստի տարիներին հրեաների ստրկական աշխատանքի և նրանց նկատմամբ կիրառված հալածանքի, հետապնդումների, ինչպես նաև հրեական սեփականության դիմաց, որը գողացվել, թալանվել էր նացիստների կողմից: Միևնույն ժամանակ, Իսրայելում և աշխարհի այլ երկրներում գերմանացիների հետ որևէ բանակցություն վարելու հնարավորության, առավել ևս վարման հարցն առաջ բերեց բողոքի մեծ ալիք: Դրանում նրանք տեսնում էին վիրավորանք՝ ուղղված նացիստական ցեղասպանության զոհերի հիշատակին և աջակցություն մարդասպանների ռեաբիլիտացիային: Ավելի պրագմատիկ էր Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Հուրիոնի (Ben-Gurion) դիրքորոշումը, որը մի քանի ամիս տևող տատանումներից հետո գերմանական փոխհատուցումների հարցը 1952թ. հունվարին դրեց Իսրայելի Կնեսետի օրակարգում: Իր որոշումը նա փաստարկում էր նրանով, որ չի կարելի թույլ տալ ոճրագործներին մնալ իրենց զոհերի ժառանգորդներ, և որ հրեական պետությունն իրավասու է Երրորդ ռեյխի իրավահաջորդներից պահանջել միջոցներ, որոնք անհրաժեշտ էին թեթևացնելու աբսուրդիստիկ գործընթացը նրանց համար, ովքեր փրկվել էին նացիստական ցեղասպանությունից: Ընդ որում, իսրայելական ղեկավարը նշում էր, որ խոսքը բացառապես թալանված հրեական գույքի արժեքի փոխհատուցման մասին է, այլ ոչ թե «արյան դիմաց վճարվող փողերի», և որ նյութական պահանջները չեն վերաբերվում պատմաբարոյական խնդիրներին, որոնք հավերժ կմնան չվճարված: Եռօրյա բուռն քննարկումների արդյունքում, որոնք արտացոլում էին հրեական հասարակության մեջ այս հարցի շուրջ առկա սուր տարաձայնությունները, Բեն-Հուրիոնի առաջարկը, որը ենթադրում էր (չնայած բացեիքաց այդ մասին չասվեց և ոչ մի խոսք) Արևմտյան Գերմանիայի հետ ուղղակի բանակցություններ վարելու համաձայնություն, ընդունվեց Կնեսետի կողմից 61 ձայն կողմ, 50՝ դեմ հարաբերակցությամբ:

Գերմանական փոխհատուցումների մասին բանակցությունները կայացան 1952թ. մարտ-սեպտեմբեր ամիսներին: Դրանց արդյունքում 1952թ. սեպտեմբերի 10-ին Լյուքսեմբուրգում Կ.Ադենաուերի, Մ.Շոմետի և Ն.Գոլդմանի միջև կնքվեց համաձայնություն, ըստ որի՝ Արևմտյան Գերմանիան պարտավորվեց 12-14 տարիների ընթացքում վճարել \$845 միլիոն կամ 3 մլրդ մարկ (հրեական կողմը պահանջեց, որպեսզի \$500 մլն-ը պարտավորվի վճարել Արևելյան Գերմանիան, սակայն մինչև Գերմանիայի վերամիավորումը այդ պահանջը մնաց անպատասխան), որոնցից \$110 մլն-ը նախատեսվում էին Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող կոնֆերանսին, ինչպես նաև ուղղակի փոխհատուցումների վճարումներ ընտրված անհատներին: Գերմանիան մեկանգամյա փոխհատուցում էր վճարում 275 հազար վերապրողների: Այսօր նրանց թիվը կազմում է 120 հազ. մարդ:

Արաբական երկրները սպառնում էին բոյկոտ հայտարարել Արևմտյան Գերմանիային, եթե այդ համաձայնությունը վավերացվեր Բունդեսթագի կողմից: Սակայն այդ սպառնալիքը հետաձգեց համապատասխան որոշման ընդունումը ընդամենը կես տարով, և այն ուժի մեջ մտավ 1953թ. մարտի 27-ին: Գերմանական խորհրդարանը 1953թ. սեպտեմբերին ընդունեց հատուկ օրենք գերմանական փոխհատուցումների մասին, որը հետագայում մի քանի անգամ ճշտվեց ու լրացվեց: Իսրայելի կառավարությունն այդ գումարները ներդրեց երկրի ենթակառուցվածքների զարգացման մեջ, դրանք մեծ դեր ունեցան նոր պետության տնտեսության հիմնադրման և զարգացման համար: Գումարներն օգտագործվում էին տնտեսության հիմնա-

րար ճյուղերի՝ գյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի և էլեկտրական ցանցերի զարգացման համար: Ծրագրի իրականացումը հանձնարարվեց հատուկ ստեղծված Գերմանական փոխհատուցումների պետական ընկերությանը: Ծրագրի շրջանակներում ԳՖՀ-ից Իսրայել էին փոխանցվում նաև անհրաժեշտ ապրանքներ ու ծառայություններ՝ ուղղված գլխավորապես գյուղատնտեսության մեխանիզացմանը, արդյունաբերության գիտատար ճյուղերի զարգացմանը և առևտրական նավատորմի ստեղծմանը: Լյուքսեմբուրգյան համաձայնության (1953-65) գործողության ժամանակահատվածում, որը կետառկետ իրականացվեց ԳՖՀ-ի կողմից, գերմանական փոխհատուցումների հաշվին իրականացված մատակարարումները կազմեցին Իսրայելի ամենամյա ներմուծումների 12-20%-ը:

Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող կոնֆերանսը լյուքսեմբուրգյան համաձայնությամբ իրեն տրամադրված միջոցները (ԳՖՀ կառավարությունը 110 մլն-ին ավելացրեց \$16 մլն) գլխավորապես օգտագործեց նացիստական ցեղասպանությունից փրկված և Իսրայելից դուրս՝ եվրոպական բազմաթիվ երկրներում բնակվող Հոլոքոստը վերապրողներին օգնելու նպատակով: (Փակագծերում նկատենք, որ ծրագրի իրագործման ընթացքում բացարձակապես ոչինչ չհասավ Խորհրդային Միությունում և նրա արևելակողմյան դաշնակից երկրներում բնակվող հրեաներին, որոնք պակաս չէին սուժել նացիստական հետապնդումներից:) Այդ միջոցներից Կոնֆերանսը վճարեց շուրջ 50 հազ. հրեաների հայրենադարձության, համակենտրոնացման ճամբարների բազմաճակատ նախկին բանտարկյալներին տրամադրվող բուժօգնության, շուրջ 200 հազ. մարդկանց անհատական փոխհատուցման պահանջների բավարարմանն ուղղված իրավաբանական օգնության կազմակերպման համար, նացիստական օկուպացիայի ենթարկված եվրոպական երկրներում հրեական համայնքային կյանքի վերակենդանացմանն ուղղված ծախսերը և այլն: Մրան գուգահեռ, իրականացվում էին խոշոր կրթական և մշակութային ծրագրեր, ինչպես, օրինակ, նացիզմի զոհերի բազմաճակատ ընտանիքների երեխաներն ապահովվում էին կրթաթոշակներով, 18 երկրներում հիմնվեցին 150 հրեական ուսումնական հաստատություններ, 13 լեզուներով հրատարակվեցին Հոլոքոստը վերապրած հեղինակների շուրջ 400 ստեղծագործություններ և այլն: Այդ նույն աղբյուրից զգալի չափով ֆինանսավորվեցին նաև Յադ Վաշեմում և այլուր տարվող՝ Հոլոքոստին նվիրված գիտական ուսումնասիրությունները, սկզբնական կապիտալ առանձնացվեց 1965թ. Նյու Յորքում հրեական մշակույթի հուշային ֆոնդ հիմնելու համար և այլն:

1952թ. մարտին ԳՖՀ-ն վերցրեց նաև հրեա անհատներից պատերազմի ընթացքում թալանված, բռնագրավված գույքի վերադարձման պարտավորությունը, որն օրենսդրական ձևակերպումներ ստացավ 1953թ., ապա պարբերաբար լրացումներ ունեցավ 1956-1963թթ. ընթացքում և վերջնականապես ձևակերպվեց 1965թ. (Արևմտագերմանական փոխհատուցման օրենքներ - West German Indemnification Laws (BEG): Համաձայն այդ օրենքների, անհատական փոխհատուցումներ վճարվեցին Իսրայելում և աշխարհի տարբեր երկրներում բնակվող հարյուր հազարավոր հրեաների, իսկ ԳՖՀ ծախսերն այդ նպատակով հաշվվում էին միլիարդավոր գերմանական մարկեր: Անհատական փոխհատուցումները (չնայած և հրեական պաշտոնական մոտեցումների մեջ ոչինչ չի փոխվել) առ այսօր վճարվում են ոչ միայն ունեցվածքի, այլ նաև կյանքի կորստյան (զոհերի ժառանգներին), առողջությանը պատճառած վնասի, ազատության կորստի և նույնիսկ մասնագիտական ու տնտեսական առաջընթացին խոչընդոտելու համար:

1952թ. սեպտեմբերին Իսրայելի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ իր ներկայացուցիչների ստորագրությունը գերմանական փոխհատուցումների համաձայնության ներքո բնավ չի նշանակում, թե իրենք հաշտվում են գերմանական ժողովրդի հետ կամ ճանաչում են որևիցե գերմանական պետության գոյությունը: Սակայն միջպետական հարաբերությունների մակարդակում նման դիրքորոշման մնալն այն բանից հետո, երբ Իսրայելը գնաց շփումների ԳՖՀ-ի հետ փոխհատուցումների հարցում, բավական դժվար էր: Տնտեսական կապերի առկայությունը, դրանց խորացումը, ինչպես նաև միջազգային իրադրությունը բերեցին նրան, որ 1965թ. երկու պետությունների միջև հաստատվեցին դիվանագիտական կապեր:

1990-ական թթ. հրեաները սկսեցին պահանջներ ներկայացնել Արևելյան Եվրոպայում իրենցից խլված-թալանված սեփականության դիմաց: Բազմաթիվ խմբեր սկսեցին հետազոտել, թե ինչ է պատահել այն գումարներին, որոնք պահ են տրվել շվեյցարական բանկերին Շվեյցարիայից դուրս բնակվող հրեաների կողմից, որոնք հետագայում սպանվել են Հոլոքոստի տարիներին: Ի լրացումն առանձին կազմակերպություններ, որոնցից շատերը հիմնավորված էին հենց Գերմանիայում, սկսեցին ճնշման ենթարկվել վերապրողների խմբերի կողմից՝ իրենց կողմից բռնի կատարված աշխատանքի գումարները փոխհատուցելու պահանջով: Դրանց թվում էին Deutsche Bank AG-ը, Siemens AG-ը, Bayerische Motoren Werke AG (BMW)-ը, Volkswagen AG-ը, Adam Opel GmbH-ը: Ի պատասխան, 1999թ. սկզբին գերմանական կառավարությունը հայտարարեց այդ ընկերություններից վերցրած գումարներով դրամական ֆոնդի ստեղծման մասին՝ օգնելու համար Հոլոքոստը վերապրածներին: Նման մի ֆոնդ ստեղծվեց նաև Շվեյցարիայում, ապա և Հունգարիայում, որոնց նպատակն էր փոխհատուցել Հոլոքոստի զոհերին և նրանց ժառանգորդներին:

1990-ական թթ. վերջերին տեղի ունեցան քննարկումներ ապահովագրական այն ընկերություններում, որոնք ապահովագրել էին հրեաներին պատերազմից առաջ և որոնք հետագայում սպանվեցին նացիստների կողմից: Այդ ընկերությունների թվում էին Allianz-ը, AXA-ն, Assicurazioni Generali-ն, Zurich Financial Services Group-ը, Winterthur-ը, Baloise Insurance Group-ը: Յադ Վաշեմի հետազոտությունների շնորհիվ ճշտվում էին Հոլոքոստի զոհերի մասին տեղեկությունները, իսկ ԱՄՆ նախկին պետքարտուղար Լոուրենս Իգլբերգերի (Lawrence Eagleburger) նախագահությամբ ստեղծված միջազգային հանձնաժողովը փորձում էր ճշտել ապահովագրված, ապա և Հոլոքոստի տարիներին զոհված մարդկանց անունները: Ստեղծվեց Համաշխարհային հրեական փոխհատուցման կազմակերպություն, որը պետք է համակարգեր այս ջանքերը: Որպես հրեական ծագմամբ ԱՄՆ քաղաքացիների շահերի ներկայացուցիչ՝ ԱՄՆ Արտաքին փոխհատուցումների պահանջի լուծման հանձնաժողովը (US Foreign Claims Settlement Commission) 1998 և 1999թթ. գերմանական կառավարության հետ հասավ համաձայնության համապատասխան վճարումներով փոխհատուցելու համար Հոլոքոստի այն զոհերին, որոնք ներգաղթել էին ԱՄՆ պատերազմից հետո:

Ինչպես վերը նշել էինք, դեռևս 1952թ. տարվող բանակցությունների ժամանակ Արևմտյան Գերմանիան սկզբունքորեն ճանաչեց իր պարտավորությունները փոխհատուցումներ վճարելու Հոլոքոստը վերապրողներին: Մինչդեռ Արևելյան Գերմանիան, չնայած Պահանջների կոնֆերանսի բազմաթիվ ջանքերի, վճռականորեն մերժում էր վերցնել որևիցե նման պարտավորություն: 1990թ., երբ Արևմտյան և Արևելյան Գերմանիաները բանակցում էին իրենց միավորման համաձայնության շուրջ, Պահանջների կոնֆերանսը հարց բարձրացրեց, որպեսզի միավորված Գերմանիան կատարի իր պարտավորությունները և փոխհատուցումներ վճարի Հոլոքոստի այն վերապրողներին, որոնք մինչ այդ ստացել էին փոխհատուցում կամ շատ քիչ չափով, կամ ընդհանրապես չէին ստացել:

ԱՄՆ կառավարության ակտիվ օժանդակության շնորհիվ, Պահանջների կոնֆերանսը ինտենսիվ բանակցություններ սկսեց Գերմանիայի կառավարության հետ: Արդյունքում 1990թ. հոկտեմբերի 3-ի Գերմանիայի վերամիավորման պայմանագրի իրագործման համաձայնագրի 2-րդ հոդվածում (Article 2 of the Implementation Agreement to the German Unification Treaty of October 3, 1990) ձևակերպվեց հետագայում վճարվելիք փոխհատուցումների մասին խոստում, որը հնչում է հետևյալ կերպ. «Դաշնային կառավարությունը պատրաստ է, ի շարունակություն ԳՖՀ քաղաքականության, համաձայնության գալ Պահանջների կոնֆերանսի հետ՝ հատկացնելու լրացուցիչ ֆոնդեր վճարումներ կատարելու համար այն զրկանքների դիմաց, որ կրել են հետապնդումների ենթարկվածներից նրանք, ովքեր մինչև այժմ՝ համաձայն ԳՖՀ օրենսդրությամբ ընդունված որոշումների՝ կամ բնավ չեն ստացել, կամ ստացել են նվազագույն փոխհատուցումներ»:

Այս համաձայնությունը, որը հայտնի է իբրև Ֆոնդի հոդված 2 (Article 2 Fund), հետևանք էր ընդհանուր առմամբ ավելի քան 16 ամիս շարունակվող դժվարին բանակցությունների: Այս հոդվածի հիմամբ փոխհատուցումներն իրականացվում են ամենամսյա €270 վճարումների



ձևով, որի չափն աճել է 2003թ. վարված բանակցություններից հետո: Պահանջների կոնֆերանսը կառավարում է ֆոնդը՝ համաձայն գերմանական կառավարության սահմանած ձևի:

Արդ, որոնք են Ֆոնդի հոդված 2-ի հիմնական արդյունքները: Արդեն 1990- ական թթ. կեսերին այդ հոդվածի կիրառման շնորհիվ թեթևացան համապատասխան ցուցակներում ընդգրկվելուն ուղղված պոտենցիալ պահանջատերերին ներկայացվող պահանջները (eligibility criteria), ինչի շնորհիվ լրացուցիչ 25 հազ. մարդ սկսեցին թոշակներ ստանալ: Մինչ այդ բանակցությունները, հոդված 2-ը տարածվում էր միայն այն վերապրողների վրա, ովքեր բավարարում էին ֆոնդի կողմից առաջ քաշվող բոլոր չափանիշներին, այդ թվում և այն կետին, որ լրացուցիչ գումարներ ստանալու իրավունք ունեն նրանք, ում անհատական եկամուտները չեն գերազանցում տարեկան \$16.000-ը, կամ այն ամուսնական զույգերը, ում եկամուտները չեն գերազանցում տարեկան \$21.000-ը: Այս սահմանափակումները բավական ազատականացվեցին, երբ Պահանջների կոնֆերանսը 70 տարեկան և ավելի մեծահասակների համար, ովքեր համապատասխանում էին ֆոնդի մյուս չափանիշներին, պահանջեց եկամուտների գումարները հաշվարկելուց բացառել սոցիալական ապահովության համար կատարվող վճարումները:

2000-2004թթ., շնորհիվ Պահանջների կոնֆերանսի կողմից տարվող բանակցությունների, տարեցտարի ընդլայնվեցին ամենամյա լրավճարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (eligible applicants) ցուցակները՝ ի հաշիվ այն հրեաների, ովքեր բանտարկված են եղել հատուկ ավստրիական, ինչպես նաև նախկինում որպես այդպիսին չճանաչված ռումինական, հունգարական, բուլղարական ճամբարներում, կամ աշխատել են Հարավսլավիայում գտնվող պղնձահանքերում, կամ հունգարացիների համար Ուկրաինական ռազմաճակատում գործող աշխատանքային գումարտակներում, կամ Ռումինիայում գործող աշխատանքային գումարտակներում և այլն: 2004թ. ձեռք բերվեց համաձայնություն, որպեսզի փոխհատուցումներ տրվեն պատերազմի տարիներին Բուլղարիայում բնակվող 18 տարեկանը լրացած այն հրեաներին, ովքեր ստիպված էին ունենալ կեղծ ինքնություն կամ այլ կեղծ փաստաթղթեր և բնակվում էին ոչ լեգալ, ինչպես նաև համապատասխանում էին մի շարք այլ ցուցանիշների: 2005թ. գերմանական կառավարությունը համաձայնվեց Հոլոքոստը վերապրածների ցուցակում ընդգրկել այն անձանց, ովքեր ամենաքիչը վեց ամիս ներկայված էին Հունգարիայում, Թունիսում, Մարոկոյում և Ալժիրում գործող աշխատանքային ճամբարներում և համապատասխանում էին ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ դիտվող մի շարք այլ ցուցանիշների: 2006թ. Պահանջների կոնֆերանսը բանակցում էր, որպեսզի ցանկում ընդգրկվեն նաև թունիսյան երեք ներկայված անձանց համար նախատեսված ճամբարներում մնացող հրեաներին, որոնք համապատասխանում էին անհրաժեշտ դիտվող մի շարք այլ ցուցանիշներին:

1998թ. Պահանջների կոնֆերանսը գերմանական կառավարության հետ բանակցությունների արդյունքում ձեռք բերեց համաձայնություն, ըստ որի հիմնադրվեց Կենտրոնական և Արևելաեվրոպական հիմնադրամ (Central and Eastern European Fund - CEEF), որը պետք է փոխհատուցումներ վճարեր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, նաև նախկին ԽՍՀՄ այն հրեա բնակչությանը, որոնք ենթարկվել էին հալածանքների նացիստների կողմից: Նախատեսվում էր փոխհատուցումներ ստանալու իրավունք ունեցողներին վճարել ամսական 250 գերմանական մարկ: 1999թ. հունվարի 1-ից գերմանական կառավարությունը որոշեց նշված հիմնադրամին չորս տարի անընդմեջ հատկացնել 50-ական մլն գերմանական մարկ: Պահանջների կոնֆերանսը հաշվարկեց, որ շուրջ 18 հազ. վերապրողներ կօգտվեն այդ հիմնադրամից, բայց առ այսօր բանակցում է, որպեսզի ազատականացվեն իրավունքների տրամադրման ցուցանիշները: Ներկայումս վճարումները կազմում են ամսական €135 այն երկրների բնակիչների համար, որոնք Եվրամիության անդամ չեն և 2006-ից ի վեր (կրկին Պահանջների կոնֆերանսի բանակցությունների արդյունքում) ամսական €175 Եվրամիության նորանդամ երկրների (Չեխիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա) համապատասխան կատեգորիայի քաղաքացիների համար: Պահանջների կոնֆերանսը շարունակում է բանակցությունները՝ ավելացնելու համար վճարների գումարների չափը:

Վերը հիշված Արևմտագերմանական փոխհատուցման օրենքների (BEG) պայմանները ենթադրում էին, որ ուղղակի փոխհատուցումների վճարումները սահմանափակվում էին

նախկին գերմանական քաղաքացիների, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց համար: Նաև նշեցինք, որ խորհրդային բլոկի երկրներում բնակվող Հոլոքոստը վերապրողները ոչ մի փոխհատուցում չէին ստացել: ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև լարվածության մեղմացման ժամանակաշրջանում բազմաթիվ վերապրողներ՝ փախստականի կարգավիճակով, արտագաղթեցին Արևմուտք: Սակայն նրանք շարունակում էին դուրս մնալ գերմանական փոխհատուցման ծրագրերից, քանի որ, ըստ Արևմտագերմանական փոխհատուցման օրենքների, փոխհատուցումներ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակների կազմման վերջնաժամկետը սահմանված էր 1965 թվականը:

1975թ. սկսած՝ Պահանջների կոնֆերանսը սկսեց բանակցությունների մի նոր փուլ՝ ուղղված խորհրդային ճամբարի երկրներից փախստականների փոխհատուցումներ ստանալու իրավունքի հաստատմանը, այդպիսով երկարացնելով վերոնշյալ ցուցակների կազմման վերջնաժամկետը: Վերջապես, 1980թ. ԳՖՀ-ն ստեղծեց «Ձրկանքների [ենթարկվածների] հիմնադրամը» (Hardship Fund) 400 մլն գերմանական մարկ գումարով: Նախատեսվում էր, որ այդ գումարներով Հոլոքոստը վերապրողներից յուրաքանչյուրին կտրվեն մեկանգամյա վճարումներ 5000 գերմանական մարկի (ներկայում՝ €2556) չափով, որից 5%-ի չափով գումար առանձնացվելու էր դրամաշնորհների համար: Գերմանական կառավարությունը ստեղծեց այս հիմնադրամն այն պայմանով, որ Պահանջների կոնֆերանսը (և ոչ գերմանական կառավարությունը) կիրականացնի հիմնադրամի տնօրինումը և վճարների տրամադրումը: Հաշվարկված է, որ Հոլոքոստի շուրջ 80 հազ. վերապրողներ կօգտվեն այս հիմնադրամի վճարումներից: ԽՍՀՄ փլուզումից հետո ավելի շատ Հոլոքոստ վերապրողներ արտագաղթեցին Արևմուտք: Համապատասխան բանակցություններից հետո Պահանջների կոնֆերանսը հասավ նրան, որ մինչև 1992թ. վերջը գերմանական կառավարությունը «Ձրկանքների ենթարկվածների հիմնադրամին» լրացուցիչ տրամադրեց ևս 135 մլն գերմանական մարկ, ինչպես նաև 10 մլն գերմանական մարկ՝ կառուցվածքային բնույթ ունեցող դրամաշնորհների համար, Իսրայել պետությանը:

«Ձրկանքների ենթարկվածների հիմնադրամն» այսօր ևս շարունակում է ֆինանսական օժանդակություն տրամադրել նացիստական հալածանքների բազմաթիվ տարիքավոր զոհերի: Նկատվում է, որ նացիզմի այն զոհերը, որոնք որոշակի արևմտյան երկրների քաղաքացիներ էին հալածանքների տարիներին և այն ժամանակներում, երբ ձեռք էին բերվում համաձայնություններ այդ երկրների և Գերմանիայի միջև, ներկայում չեն ստանում որևիցե վճարում «Ձրկանքների ենթարկվածների հիմնադրամից»: Գերմանական կառավարությունը ներկայում չի նախատեսում վճարումներ իրականացնել նման տիպի մարդկանց համար, ինչը, թերևս, գործունեության նոր դաշտ է բացում Պահանջների կոնֆերանսի համար:

Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող մարմին Պահանջների կոնֆերանսը գործում է ավելի քան կես դար: Առ այսօր էլ նրա գործունեության նպատակները նույնն են. ապահովել Հոլոքոստը վերապրողների և Հոլոքոստի զոհերի ժառանգների համար դրամական փոխհատուցումների ձևով իրականացվող վճարումները և իլվածի վերականգնումը (restitution): 1951թ. ի վեր Պահանջների կոնֆերանսը, համագործակցելով Իսրայել պետության հետ, բանակցել է և կազմակերպել է վճարումների իրականացում Գերմանիայի, Ավստրիայի, այլ երկրների ինչպես կառավարությունների, այնպես էլ արտադրության առանձին ըլորտների կողմից, հետ է բերել չպահանջված գերմանական-հրեական սեփականությունը և ֆոնդավորել ծրագրեր՝ օժանդակելու համար նացիզմի կարիքավոր հրեա զոհերին:

Այս ընթացքում, որպես արդյունք Պահանջների կոնֆերանսի աշխատանքի, 75 երկրներում բնակվող ավելի քան 500 հազ. Հոլոքոստը վերապրողներ ստացել են փոխհատուցման վճարներ: Այդ վճարումների գումարը կազմել է ավելի քան \$60 մլրդ: Պահանջների կոնֆերանսը տրամադրել է շուրջ \$1 մլրդ այն կազմակերպություններին, որոնք զբաղվում են Հոլոքոստը վերապրողների սոցիալական պահանջների բավարարման հարցերով, և ներգրավված են Շոային նվիրված հետազոտություններում, նրա մասին դասավանդելուն, և փաստաթղթերի ուսումնասիրությանը: Կոնֆերանսը նաև գումարներ է տրամադրել վերականգնելու գերմանացիների կողմից ոչնչացված հրեական համայնքները և կազմակերպությունները:

Առ այսօր Պահանջների կոնֆերանսը շարունակում է գործել: Մասնավորապես, շարունակվում են բանակցությունները Գերմանիայի և Ավստրիայի, ինչպես նաև առանձին արդյունաբերական կազմակերպությունների ու բանկերի ներկայացուցիչների հետ: Պահանջների կոնֆերանսը շարունակում է կառավարել փոխհատուցման ծրագրերը և բաշխել վճարումները, նաև նացիստական հետապնդումների ենթարկված հրեաների ժառանգների երիտասարդ սերնդին օժանդակում է կազմակերպություններին տրվող դրամաշնորհների միջոցով, որոնք ձևավորվում են նախկին Արևելյան Գերմանիայում գտնվող հրեական չպահանջված սեփականության վաճառքի գումարներից:

Որոշ հետևություններ.

ա) ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման և ստացման հարցը գործընթաց է, որը կարող է տևել տասնյակ տարիներ: Հրեաների պարագայում այն շարունակվում է ավելի քան 55 տարի:

բ) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների փոխհատուցումը ոչ մի կապ չունի «արյան գնի» հետ, որը ենթակա չէ վճարման: Փոխհատուցման փաստը չի նշանակում ցեղասպանությունն իրականացրած գաղափարախոսությունը կրող ժողովրդի ներկայացուցիչների ներում ցեղասպանությունը վերապրողների կամ ցեղասպանության ենթարկված ժողովրդի կողմից: Երկու կողմերը կարող են ունենալ նորմալ միջպետական հարաբերություններ, միևնույն ժամանակ, նման հարաբերությունների առկայությունը կամ բացակայությունը չի կարող խոչընդոտ դիտվել փոխհատուցման գործընթացի ձևավորման համար:

Ցեղասպանության հարցերին նվիրված վերլուծական, քարոզչական աշխատանքներում առավելապես շեշտվում է ցեղասպանությունն իրականացրած կողմին առաջնորդող գաղափարախոսության պահը, քան թե ցեղասպանությունն իրականացրած կողմի էթնիկ պատկանելության գործոնը:

գ) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների նյութական փոխհատուցումների դրսևորումները տարաբնույթ են: Դրանք կարող են լինել ինչպես դրամական ուղղակի և անուղղակի փոխհատուցումներ վերապրողներին ու զոհերի ժառանգներին (թե՛ միանվագ, թե՛ տարիներ ու տասնամյակներ շարունակվող), այնպես էլ նյութական փոխհատուցումներ (դրամի, ենթակառուցվածքների, դրամաշնորհների տրամադրման և այլ ձևերով) ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավահաջորդը հանդիսացող պետական միավորմանը:

դ) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման, ստացման ու բաշխման գործի իրականացման համար լավագույն ձևը միջազգային ոչ կառավարական կազմակերպության ստեղծումն է, որը կաշկանդված չէ շահառու հանդիսացող պետության օրենքներով: Այդ մարմինը նաև հետազոտական-իրավական գործունեություն իրականացնող կառույց է, այն պետությունից ստանում է որոշակի իրավասություններ և գործում է դրանց շրջանակներում՝ միաժամանակ ներկայացնելով ցեղասպանության ենթարկված ժողովրդի աշխարհով մեկ սփռված ժառանգների շահերը:

ե) Ցեղասպանության զոհեր դիտվում են ոչ միայն ցեղասպանության իրականացման տարիներին զոհվածները, այլև նրանք, ովքեր 1. իրենց բնակության վայրերից ենթարկվել են բռնի տեղահանման, 2. տարհանվել են համակենտրոնացման ճամբարներ, 3. բռնի աշխատել են հանքերում, աշխատանքային գումարտակներում և այլուր, 4. ենթարկվել են որոշակի բարոյական կամ այլ բնույթի զրկանքների, հալածանքների, 5. հնարավորություն չեն ունեցել ստանալ համապատասխան կրթություն, զուրկ են եղել մասնագիտական աճի հնարավորություններից և այլն:

զ) Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող մարմնի՝ Պահանջների կոնֆերանսի գործունեության փորձը կարոտ է շարունակական ուսումնասիրության:

*Հարություն Մարության  
«Նորավանք» հիմնադրամ*

## ԾՊՏՅԱԼ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2008թ. սկզբին Թուրքիայում իշխող Արդարություն և զարգացում կուսակցությունը, համագործակցելով Ազգայնական շարժում կուսակցության հետ, առաջարկել էր փոփոխություններ կատարել երկրի սահմանադրության 10-րդ և 42-րդ հոդվածներում, ինչպես նաև Բարձրագույն կրթության խորհրդի օրենքի 17-րդ կետում: Այս քայլով նախատեսվում էր Թուրքիայում վերացնել բուհերում գլխաշոր կրելու արգելքը: Քաղաքական իսլամի խորհրդանիշը՝ կանացի գլխաշորը, հատկապես վերջին տարիներին անընդհատ հայտնվում է Թուրքիայի ներքաղաքական զարգացումների կիզակետում: Գլխաշորի հարցն անմիջականորեն առնչվում է նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի սկզբունքներին, սակայն իշխող իսլամամետ կուսակցությունը հարցը ներկայացնում է մարդու իրավունքների համատեքստում: Խորհրդարանում անցնելով բոլոր ընթերցումները՝ օրենքի փոփոխությունը վավերացվեց նաև Թուրքիայի նախագահ Արդուլահ Գյուլի կողմից և մտավ շրջանառության մեջ:

Սակայն իշխող իսլամամետ կուսակցության այս նախաձեռնությունն առաջ բերեց նաև հակընդդեմ կարծիքներ, և ընդդիմադիր կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, հայտնի քաղաքական, մշակութային գործիչներ հանդես եկան դրա խիստ քննադատությամբ: Եվ բնական է, որ այս բողոքի ալիքին ակտիվորեն մասնակցեցին նաև մի շարք համալսարաններ, որոնց ռեկտորները, հանդես գալով քեմալականության սկզբունքների պաշտպանության դիրքերից, խիստ դեմ արտահայտվեցին նշյալ փոփոխություններին: Ռեկտորների այս քայլն արժանացավ իշխանության, ինչպես նաև իշխանամետ լրատվամիջոցների բուռն քննադատությանը, և, կարծում ենք, ահա հենց այս համատեքստում պետք է դիտարկել մարտի սկզբին համալսարանական լուրերի կայքէջի տարածած տեղեկատվությունը, համաձայն որի՝ Թուրքիայում 22 ծպտյալ քրիստոնյա ռեկտորներ և դեկաններ կան, որոնց մեծ մասն ունի հայկական ծագում: Ըստ այդ աղբյուրի, Թուրքիայի ծպտյալ քրիստոնյաների մի մասն ընդգրկված է քաղաքականության, բիզնեսի, պետական ծառայության համակարգում, սակայն ամենազգալի տեղը նրանք կարողացել են զբաղեցնել կրթության ոլորտում և թաքցնելով իրենց իրական կրոնը՝ հասել են դեկանի, ռեկտորի պաշտոնի:

Պետք է ասել, որ արդեն տևական ժամանակ է, ինչ տարբեր մակարդակի թուրք պաշտոնյաներ, գիտնականներ խոսում են Թուրքիայում ապրող ծպտյալ, իսլամացված կամ էլ հայկական ծագում ունեցող մարդկանց՝ պետական տարբեր օղակներում աշխատելու մասին: Բոլորովին վերջերս թուրքական մամուլում այդ խնդրի մասին արտահայտվեց և իր մտահոգությունը հայտնեց Թուրքիայում ծպտյալ քրիստոնյաների և կրիպտո հրեաների խնդրով բավական շատ հրապարակումների և գրքերի հեղինակ Մեհմեդ Շևքեթ Էյզին: Այսպես, խոսելով համալսարանական լուրեր պատրաստող կայքէջի վերը նշված տվյալների մասին՝ նա մեջբերեց նաև Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ Մուրթաֆյանի Փարիզի La Croix օրաթերթի 2005թ. օգոստոսի 29-ի համարում տպագրված այն միտքը, թե Թուրքիայում ներկայումս մոտավորապես 1.5 միլիոն հայկական արմատներով թուրք և մուսուլման կա: Պատրիարքը ավելացրել է նաև, որ ամեն տարի հայկական ծագումով շուրջ 60 մուսուլմաններ, դիմելով պատրիարքարան, վերադառնում են քրիստոնեության: Ըստ Էյզիի, ինքը դեմ չէ, որ հայերը լինեն ռեկտոր կամ դեկան, սակայն նրանք պետք է ծպտյալ չլինեն և չունենան երկու ինքնություն: Նա պնդում է, որ Թուրքիայում կա նաև կրիպտո հրեաների խնդիրը, և նրանց թիվը շուրջ 1.5 միլիոն է: Խոսելով ծպտյալ հույների մասին՝ Էյզին բերում է թուրքական Բողոքի համալսարանի պրոֆեսորներից Դեմիր Դեմիրգիլի օրինակը, որն իրականում հույն է: Էյզին կարծիք է հայտնում նաև, որ հենց տարատեսակ ծպտյալներն են ներկայումս Թուրքիայում բուռն քննարկվող գլխաշորի դեմ արտահայտվողները, և կոչ է անում մանրամասն ուսումնասիրել այս խնդիրը:

Նշենք, որ Թուրքիայի բուհական համակարգում ծայտյալ հայերի կամ հայկական ծագում ունեցողների թեման բուռն քննարկումների արժանացավ դեռևս 2005թ., երբ քրեական գործ հարուցվեց Վանի «Հարյուրերորդ տարի» համալսարանի ռեկտոր Յուզել Աշքընի դեմ: 2005թ. հունիսի 10-ին թուրքական «Վաքիթ» թերթում տպագրվեց մի հոդված, որում ասվում էր, որ Յուզել Աշքընի պապը հայազգի Հակոբ Վարդուվյանն է, որը հետագայում ընդունել է իսլամ: Վերոհիշյալ Հակոբ Վարդուվյանը (1840-1902թթ.) հայտնի հայ թատերական գործիչ է, որը զգալի ավանդ ունի օսմանյան թատրոնի կայացման գործում: Թուրք հայտնի մշակութաբան Մեթին Անդր իր «Օսմանյան թատրոնը» ուսումնասիրության մեջ մեծ ակնածանքով է խոսում Հակոբ Վարդուվյանի մասին՝ համարելով նրան «թուրքական թատրոնի պատմության մեջ շատ կարևոր մի անձ», և նույնիսկ կարծում, որ իր վաստակով Հակոբ Վարդուվյանը արժանի է, որպեսզի իր արձանը կանգնեցվի: Ինչպես նշված է տարբեր աղբյուրներում, Հակոբ Վարդուվյանը, իրոք, հետագայում իսլամ է ընդունել և փոխել անունը՝ դառնալով Մեհմեթ Յաքուփ, սակայն նա ավելի հայտնի է Գյուլլու Ագոփ անվամբ, որը Հակոբ Վարդուվյան անվան ուղղակի թարգմանությունն է թուրքերեն: Ռեկտոր Յուզել Աշքընի հայրը՝ Նեջիփ Աշքընը, այսինքն՝ Հակոբ Վարդուվյանի որդին, նույնպես արվեստագետ է և համարվում է Թուրքիայի ամենահայտնի ջութակահարներից մեկը: Ի տարբերություն հոր և պապի՝ Յուզել Աշքընը ընտրում է գիտության ուղին՝ հասնելով դոկտոր-պրոֆեսորի աստիճանի: 1995թ. նա ընտրվում է Վանի «Հարյուրերորդ տարի» համալսարանի գյուղատնտեսության ֆակուլտետի դեկան, իսկ 1999թ.՝ նույն համալսարանի ռեկտոր: Ի դեպ, երբ թուրքական մամուլում բուռն կերպով շարունակվում էին Յուզել Աշքընի ծագման մասին քննարկումները, նա բացահայտ հայտարարեց հետևյալը. «Ես հպարտ եմ, որ Հակոբի թոռն եմ: Պապս՝ Հակոբ Վարդուվյանը, հետագայում իսլամ ընդունելով վերցրել է Յաքուփ անունը: Պապս հայ էր, սակայն ես թուրք եմ, Թուրքիայի քաղաքացի: Ինքս ինձ երբեք հայկական համայնքի անդամ չեմ համարել: Հայերի հանդեպ հատուկ մի մտերմություն չունեմ: Իսկ 1915-ի դեպքերը, ըստ իս, մարդկային ողբերգություն են»: Այս ինչ-որ տեղ խոստովանական հայտարարությունից հետո նա շարունակեց մնալ որպես թուրքական մամուլի և տարբեր շրջանակների թիրախ, իսկ ոմանք նույնիսկ կարծիք հայտնեցին, որ Յուզել Աշքընը պատահաբար չի ընտրել հատկապես Վանի համալսարանը՝ դա կապելով Վանի նախկինում հայկական լինելու հանգամանքի հետ: Բացի այդ, նշվում է, որ ռեկտոր Աշքընը ունի հին պատմական իրեր հավաքելու նախասիրություն, և նրա հավաքածուի 1019 առարկաների մեծ մասն ունի խաչի սիմվոլիկա:

Ըստ տարբեր աղբյուրների, հայկական ծագում ունի և մինչև այժմ էլ քրիստոնյա է «Մեպտեմբերի 9-ի համալսարանի» ռեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Էմին Ալըջըն: Նրա տոհմաճառի մանրամասն ուսումնասիրությունը պարզել է, որ հոր անունը Մանուֆեր է, սակայն պապերից մեկի անունը Հովհաննես է, իսկ մյուսինը՝ Արթին (Հարություն): Կրկին «Վաքիթ» թերթում լուր էր տպագրվել, որ «Մեպտեմբերի 9-ի համալսարանի» ռեկտոր Էմին Ալըջընի ընտանիքը ծագումով Մալաթիայից է (Մալթյոփրյու գյուղից), և նրանք մինչև այժմ էլ սերտ կապեր են պահպանում Իզմիրում բնակվող իրենց հայ ազգականների հետ: Ուշագրավ է, նաև, որ Էմին Ալըջընի երկու եղբայրները՝ 1946թ. ապրիլի 15-ին ծնված ավագ եղբայր Իբրահիմ Ալըջըն 1988թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիայի նախարարների խորհրդի թիվ 88/13631 որոշմամբ, իսկ 1956թ. դեկտեմբերի 20-ին ծնված եղբայր Ազիզ Ալըջըն նախարարների խորհրդի 1989թ. ապրիլի 14 թիվ 89/13978 որոշմամբ զրկվել են քաղաքացիությունից: Որպես դրա պատճառ է համարվել նրանց «անվստահելի լինելը», իսկ թուրքական «Վաքիթ» թերթը պնդում է, որ նրանք գործել են Թուրքիայի դեմ՝ ակտիվորեն համագործակցելով հայկական ուժերի հետ: Այժմ Ալըջընի երկու եղբայրներն էլ ապրում են Վիեննայում: Հետաքրքիր է, որ ռեկտոր Էմին Ալըջըն ևս, Վանի ռեկտոր Յուզել Աշքընի նման, իր կրոնական և էթնիկ պատկանելության շուրջ ծավալված քննարկումների ժամանակ արեց ինքնախոստովանական հայտարարություն. «Ես քրիստոնյա եմ», ավելացնելով, թե ինքը լավ գիտակցում է, որ իր հայտարարության հետևանքները շատ վատ են լինելու: Նա պնդել է, որ Թուրքիայում ամեն ոք ունի կրոնի ու դավանանքի ազատության իրավունք: Սակայն, ընդունելով իր քրիստոնյա լինելը, նա կտրականապես ժխտում է հայ լինելու մասին պնդումները, իսկ լրագրողների բերած փաստարկներն իր տոհմաճառի և մասնավորապես՝ պապերի հայկական անուններ

ունենալու վերաբերյալ անպատասխան է թողնում: Ավելացնենք նաև, որ, ըստ տարբեր լուրերի, 2008թ. օգոստոսին Թուրքիայի Բարձրագույն ուսումնական խորհուրդը չի երկարացվելու 22 ռեկտորի պայմանագրեր, այդ թվում և Էմին Ալըջըրինը:

Այսպիսով, տեսնում ենք, որ 21-րդ դարում անգամ, դեպի Եվրամիություն ձգտող Թուրքիայում կիրառվում են բացահայտ էթնիկ և կրոնական խտրականություններ: Ավելին, անհրաժեշտության դեպքում պետական մարմինները բացահայտում և շրջանառության մեջ են դնում մարդկանց՝ հարկադրաբար թաքցված իրական էթնիկ և կրոնական պատկանելությունը և դրա միջոցով իրականացնում ճնշումներ, ընդ որում, ինչպես պետական մեքենայի, այնպես էլ հասարակության միջոցով: Իսկ վերոնշյալ Մեհմեթ Էյգիի այն պնդումները, թե հայերը կամ քրիստոնյաներն առանց իրենց էթնիկ և կրոնական ինքնությունը թաքցնելու կարող են ցանկացած պաշտոն զբաղեցնել Թուրքիայում, բացահայտ դեմագոգիա է: Բավական է հպանցիկ հայացք նետել հանրապետական Թուրքիայի պատմությանը և կտեսնենք, որ պետական ապարատում, զինվորական համակարգում ոչ մի բացահայտ հայ չի հասել բարձր պաշտոնի: Իսկ իր իրական ինքնությունը թաքցնելու կամ դրանից հրաժարվելու դեպքում երբեմն դրա, գոնե տեսական, հնարավորությունը կա: Սա թույլ է տալիս մեզ խոսել Թուրքիայում այն քաղաքականության շարունակության մասին, որն ուղղակի կամ անուղղակի պարտադրում է ազգային-կրոնական փոքրամասնություններին թաքցնել իրենց իրական ինքնությունը, և սա իր հերթին ձևավորում է ծպտյալների մի նոր խումբ, որն այդ քայլին դիմել է ոչ թե դարասկզբին Օսմանյան կայսրությունում ցեղասպանությունից փրկվելու, այլ հանրապետական Թուրքիայում գոյատևելու համար:

*Ռուբեն Մելքոնյան*  
*«Նորավանք» հիմնադրամ*

## ПРОГРАММА «НАЦИОНАЛЬНЫЙ ТУРИЗМ»: ВОЗМОЖНЫЙ ПОДХОД К КОНСОЛИДАЦИИ АРМЯНСТВА

«Диаспоральный» характер Республики Армения ставит перед ней определенные вызовы, от эффективного решения которых зависит стабильное развитие армянства по всему миру и повышение веса общеармянского фактора на международной арене.

Обладание Республикой Армения особой ролью в системе сохранения армянской идентичности и предпосылками для координирующей роли в системе (Армения + армянская Диаспора) защиты и продвижения общеармянских интересов диктует осуществление конкретных шагов, реализацию ответственных и масштабных программ.

Одним из возможных направлений по сплачиванию общеармянского фактора по всему миру и придания ему органической целостности может стать программа по привлечению потенциальных репатриантов-армян в Республику Армения. Данная программа может носить комплексный характер и соответственно преследовать комплексные цели стратегически общеармянского характера. Её реализация предполагает как привлечение наших соотечественников для постоянного места жительства на их исторической Родине, так и «оптимизацию» армянской Диаспоры, о которой мы писали в наших предыдущих работах.

«Общеармянская Сеть» по всему миру должна оптимизировать свою ресурсную базу (демографические, общественно-политические, экономические параметры), создать эффективно действующую систему «передаточных каналов», через которые бы оптимально распределялись ресурсы для стабильности общей системы и оптимальности выполнения её функциональной нагрузки. Понимание «Общеармянской Сети» в виде «передаточной системы» спланированного распределения ресурсов и достижения стратегических целей может показаться весьма абстрактной конструкцией, не способной перешагнуть от теоретических разработок к практической объективации.

В связи с этим, как нам представляется, в ближайшей перспективе особенно будут востребованы конкретные общеармянские программы, разработка и реализация которых требует совместного и равноправного участия Республики Армения и институциональных структур армянской Диаспоры.

Планируемое создание Министерства Диаспоры в структуре исполнительной власти Республики Армения стыкуется с нашими предложениями о разработке указанных программ, реализация которых будет происходить с основной опорой на «специализируемое» ведомство и при задействовании соответствующих государственных и общественных, бизнес структур, координирующих свои действия в рамках их реализации.

Одной из таких программ может стать программа «Национального туризма» (возможное название), в рамках которой организуется широкое привлечение всех наших соотечественников посетить территорию армянской национальной государственности на Южном Кавказе и одновременно их общую историческую Родину. «Национальный» не означает, что участниками программы могут стать только этнические армяне. Преимущества программы должны распространяться на всех лиц, которые ощущают свою связь с армянством (например, владеют армянским языком; имеют армянские корни; являются членами семьи, в которой один из близких – этнический армянин).

Девизом программы может стать следующий принцип: «Каждый армянин должен хотя бы раз в своей жизни посетить Армению».

Целями программы «Национальный туризм» являются:

1. Приобщить как можно большое число наших соотечественников к своим национальным корням, дать им возможность «окунуться» в атмосферу национально-исторической Родины.

ны и на месте почувствовать перспективность для себя и необходимость для самой Родины их проживания на территории Армении;

2. Создать широкую сеть информационно-пропагандистских и культурных мероприятий во время посещения армянскими туристами своей исторической Родины для актуализации у них чувства перспективности репатриации в Армению;

3. Способствовать «диалогу» различных проявлений армянской культуры и самобытности по всему миру на территории Армении, широким контактам посещающих Армению армян-туристов с местным населением<sup>1</sup>.

Как можно предположить, основной контингент потенциальных участников данной программы будет состоять из лиц, которые в силу тех или иных причин не удовлетворены своим нынешним социальным и материальным положением за пределами Армении, чётко осознают необходимость привития своим детям национально-культурных черт характера и коммуникативных способностей (традиции и язык), а также ввиду других причин схожего порядка.

Учёт этих факторов с необходимостью будет диктовать конкретные разработки в «маркетинге» и «менеджменте» программы «Национальный туризм», к некоторым из которых можно отнести следующие:

1. В основных центрах армянской Диаспоры за рубежом, которые в рамках программы будут рассматриваться как перспективные источники национального туризма в Армению, должны быть созданы соответствующие структуры или должны быть использованы уже имеющиеся структуры местных армянских общин, которые обладают необходимой информацией о специфике и объективных параметрах армянского присутствия на территории их нахождения и деятельности;

2. Целесообразно, чтобы государство (Республика Армения) и диаспоральные структуры за его пределами, армянские бизнес структуры по всему миру взяли бы на себя определённую часть расходов в рамках программы «Национальный туризм», что сделало бы эту программу не только национально-исторически, но и социально ориентированной. Бюджетное и внебюджетное финансирование программы (Республика Армения), финансовое участие армянских диаспоральных структур должно строиться на том принципе, что порядка 50% (а по возможности и больше) расходов, связанных с посещением Армении в рамках программы «Национальный туризм», должно оплачиваться не из кармана участника программы;

3. Особый акцент необходимо сделать на целесообразность семейного посещения Армении в рамках программы. В связи с этим особые льготы должны быть установлены для тех участников программы, которые посетят Армению со своими несовершеннолетними детьми. Так, стоимость туристической путёвки последних может или полностью покрываться за счёт средств организаторов программы, или могут устанавливаться настолько низкие тарифы, которые бы делали такую путёвку для них практически бесплатной;

4. Сроки посещения Армении должны быть определены с учётом информационно-пропагандистских и культурных факторов (акции и мероприятия во время посещения), оптимальности финансовых затрат в рамках программы и могут быть диверсифицированы по

---

<sup>1</sup> Специалистам в сфере социокультурной психологии известен термин «культурный шок». Обычно «культурный шок» трактуется как негативное и, в целом, очень неприятное для индивидуума состояние, сопровождающееся ощущением социально-культурной «некомпетентности» и беспомощности. Но существуют и положительные стороны этого явления: у многих эмигрантов и репатриантов первоначальные трудности приводят затем к расширению горизонтов восприятия и росту личности в целом. Приобретаются новые ценности, установки и модели поведения. В столкновении с другой культурой человек получает знания опытным путем, начинает понимать источники собственного этноцентризма и приобретает новые взгляды на природу человеческого многообразия. А некоторые мигранты и вовсе не ощущают депрессии и тревоги, иногда даже с удовольствием переживают новый опыт и успешно адаптируются к условиям другой культуры с первых дней пребывания.

Наверное, наиболее предпочтителен способ, состоящий в культурном обмене и взаимодействии. Для того чтобы обмен осуществлялся адекватно, то есть приносил пользу и обогащал обе стороны, нужны благожелательность и открытость с обеих сторон, что на практике встречается, к сожалению, чрезвычайно редко.



различным «тарифам» (количество туристов в группе, количество несовершеннолетних в группе или в одной семье и т.п.).

Очевидно, что при разработке программы и постановки её «на конвейер» необходимо учитывать опыт некоторых стран. Здесь можно отметить опыт двух стран, которые в разное время прибегали к реализации подобных программ.

**Израиль** особенно активно прибегает к практике совмещения репатриационных и туристических усилий для решения общееврейских и внутриеврейских (Государство Израиль) целей. В качестве только одного из примеров такого совмещения, весьма конкретного характера, можно привести следующее. В 2003г. Министерство абсорбции Израиля совместно с гостиничным объединением и управлением аэропортов страны стало проводить мероприятие, суть которого заключалась в акции, призванной повысить мотивацию к репатриации у еврейских туристов, которые посетят Израиль. В преддверии мероприятия Министерство абсорбции выпустило специальную открытку для туристов, изданную на пяти языках (русский, английский, французский, испанский и иврит) общим тиражом 30 тысяч экземпляров. Открытка предлагала туристам связаться со специально созданным к мероприятию центром информации. Занимавшая на тот момент должность министра абсорбции Ципи Ливни в преддверие проведения акции заявила: «Драматическое снижение числа репатриантов, приехавших в Израиль в текущем году, вынуждает нас делать всё от нас зависящее для того, чтобы стимулировать репатриацию, что, в частности, повлекло за собой и эту разъяснительную акцию. Естественно, что мы рассматриваем этих туристов как потенциальных репатриантов и хотим предоставить им возможность узнать всё нужное о репатриации. Мы заинтересованы в том, чтобы сделать репатриацию таких туристов возможной и ненавязчиво дать им информацию во время отдыха в Израиле»<sup>1</sup>.

Схожая программа имела место в **Германии** в 1933-1938 годах – программа «*Kraft Durch Freude*» («Сила через радость»). Несмотря на то, что туристическая программа в нацистской Германии имела абсолютно другую направленность (выезд немцев за пределы Германии), другие цели (приобщение немцев к идее «расширения жизненного пространства») и недопустимые для нынешних демократических стран проявления тоталитаристского свойства (поездки совмещались с политической индоктринацией идеями национал-социализма, туристические поездки немцев в рамках программы находились под контролем государственной службы безопасности), некоторые её положения, в особенности социально направленного и организационного характера, могут быть приняты к сведению<sup>2</sup>.

*Михаил Агаджанян*

---

<sup>1</sup> В Израиле туристов хотят обратить в репатриантов, <http://www.travel.ru/news/2003/09/22/24733.html>.

<sup>2</sup> Многие черты организованного коллективного туризма, присущие немецкой программе «KDF», оказались весьма устойчивыми и впоследствии воспроизводились в туристической практике других стран. В 1934г. по линии программы «KDF» туристические поездки совершило около 2 млн человек; в 1935г. – около 3 млн, в 1936г. – 6 млн, в 1937г. – около 9 млн. Официальная пропаганда в рамках «KDF» строилась не на классовой, а на национальной идее, на объединительных функциях туризма, в частности, на укреплении взаимопонимания и человеческих контактов между участниками совместных туристических поездок. Важной функцией туризма считалось воспитание патриотизма («только тот, кто знает свой край, может любить его, и только тот, кто любит свой край, любит свое Отечество и является достойным гражданином своего Отечества»). Рекламная кампания программы велась с применением наиболее передовых на тот период технологий. Государственными радиоканалами постоянно транслировались репортажи о поездках по программе «KDF», были изданы массовым тиражом карманные атласы, был снят документальный фильм о круизе по Атлантике с заходом в Лиссабон, на Мадейру, Азоры и Тенерифе, разыгрывались лотереи с поездкой «KDF» в качестве выигрыша и т.п. В программе была разработана методика отбора туристов из малообеспеченного населения, учитывался средний заработок семьи и количество иждивенцев, применялись методы снижения себестоимости туристского продукта (использовались государственные дотации, специальные сберегательные счета в банках, широко практиковалось размещение в семьях по низким расценкам). Обычная стоимость туристической поездки равнялась примерно половине среднемесячного заработка.

## ԲՐՈՒՔԻՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ. ԶԱՐԳԱՑՈՂ ԱՇԽԱՐՀՈՒՄ

### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒԼՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ-2008Թ.

#### *Index of State weakness in The Developing World\_2008*

Բրուքինգի ինստիտուտը ԱՄՆ կառավարության հետ փոխգործակցող, վերջինիս վերլուծական ու հետազոտական նյութերով սպասարկող կազմակերպություն է և գտնվում է Վաշինգտոնում: Հիմնադրվել է դեռևս 1916թ.՝ որպես ԱՄՆ կառավարության հետազոտական ինստիտուտ: Վաշինգտոնի հնագույն «ուղեղային կենտրոններից» մեկն է, հետազոտություններ է իրականացնում սոցիոլոգիայի տարբեր հարցերի, կառավարման, գլոբալ զարգացման ու արտաքին քաղաքականության շուրջ: 2002թ. ի վեր կազմակերպության նախագահն է Սթրոբ Թայլորը, որը Քլինթոնի վարչակարգում ԱՄՆ Պետքարտուղարի տեղակալն էր: Կազմակերպության հետազոտությունների իրականացման ծրագրի պատասխանատուներն են ինստիտուտի 5 փոխնախագահները՝ Կառլոս Պասկուալը (Ուկրաինայում ԱՄՆ նախկին դեսպան և ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի անձնակազմի ավագ ղեկավար), Լայել Բրեյնարդը (Սպիտակ տան ազգային տնտեսական հարցերով խորհրդականի նախկին տեղակալ), Ուիլյամ Գեյլը (ԱՄՆ նախագահ Բուշին կից Տնտեսական հարցերով խորհրդականների խորհրդի նախկին ավագ տնտեսագետ), Բրյուս Քեթսը և Պիետրո Նիվոլան:

Ինստիտուտի շրջանակներում իրականացվում են հինգ հիմնական ծրագրեր.

- տնտեսագիտական հետազոտություններ
- կառավարման հետազոտություններ
- արտաքին քաղաքականության հետազոտություններ
- գլոբալ տնտեսության և զարգացման
- քաղաքային/metropolitan քաղաքականության:

Բրուքինգի ինստիտուտի շրջանակներում քաղաքական հիմնահարցերի հետազոտման ուղղությամբ գործում են տարբեր վերլուծական կենտրոններ.

- Բրոուսի կրթական քաղաքականության կենտրոն
- Հյուսիսարևելասիական քաղաքական հետազոտությունների կենտրոն
- Երեխաների և ընտանիքների հարցերով կենտրոն
- Սոցիալական և տնտեսական դինամիկաների հարցերով կենտրոն
- ԱՄՆ և Եվրոպայի կենտրոն
- Ենգելբերգի առողջապահության բարեկարգման կենտրոն
- Ջոն Թորնթոնի Չինաստանի հարցերով կենտրոն
- Սաբանի մերձավորարևելյան քաղաքականության կենտրոն (հիմնադրվել է 2002թ.):

Բրուքինգի ինստիտուտն ընդգրկում է շուրջ 140 գիտնական-վերլուծաբաններ: 2004թ. դրությամբ կազմակերպության ֆինանսական կապիտալը \$258 մլն էր, որի հիմնական մասը ստացվել էր Փյու Չերիթբլը Թրասթս հասարակական կազմակերպության, ՄաքԱրթուր հիմնադրամի, Կարնեգիի հաստատության ֆինանսական միջոցներից, ԱՄՆ, Ճապոնիայի և Մեծ Բրիտանիայի կառավարություններից:

Բրուքինգի ինստիտուտի գլոբալ տնտեսության և զարգացման ծրագրի շրջանակներում վերջերս իրականացվեց, այսպես կոչված, պետությունների թուլության վարկանիշային հետազոտությունը (Index of State Weakness in The Developing Worl): Վարկանիշային հետազոտությունը նախաձեռնվեց դեռ 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո, երբ Միացյալ Նահանգների, ինչպես նաև այլ երկրների ղեկավար մարմինները համակարծիք էին այն հարցում, որ միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքները (ահաբեկչություն, զանգվածային ոչնչացման զենքի տարածում, կազմակերպված հանցավորություն, հակամարտություններ և այլն) մասամբ սկիզբ են առնում աշխարհի ամենաթույլ երկրներում: Ի դեպ,

թույլ երկրներից եկող մարտահրավերների հարցը հստակ ձևակերպում ստացավ 2002թ. ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթում: Երկրների թուլության վարկանիշային հետազոտությունը նպատակ ուներ ԱՄՆ և դաշնակից պետությունների որոշումներ կայացնող մարմիններին համարժեք տեղեկատվություն և վերլուծություններ տրամադրել այդ երկրներից բխող սպառնալիքների վերաբերյալ: Վարկանիշային նախագիծը, որը ներառում է 141 զարգացող երկիր, գլխավորել են կազմակերպության գիտական փորձագետներ Սյուզան Ռայսն ու Սթյուարթ Պատրիկը:

«Զարգացող աշխարհի թույլ երկրների ինդեքսը» հետազոտությունում երկրների վարկանիշները սահմանվել են ըստ 4 հիմնական ցուցիչների.

- տնտեսական
- քաղաքական
- անվտանգություն
- սոցիալական բարեկեցություն:

Նշված կարգերից յուրաքանչյուրը ներառում է համապատասխանաբար 5 ենթացուցիչներ կամ ենթաինդիկատորներ, որոնք ներկայացվում են աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1

*Վարկանիշային ենթացուցիչների ցուցակը՝ ըստ հինգ հիմնական կարգերի<sup>1</sup>*

տնտեսական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն
1 Համախառն ազգային եկամուտ (ՀԱԵ) (մեկ շնչին ընկնող)	6 Կառավարման արդյունավետություն	11 Հակամարտության ինտենսիվություն	16 Երեխաների մահացություն
2 ՀՆԱ աճ	7 Օրենքի ուժ	12 Քաղաքական կայունություն և բռնության բացակայություն	17 Նախադպրոցական ուսուցման ավարտ
3 Եկամտի անհավասարություն	8 Խոսքի ազատություն և պատասխանատվություն	13 Հեղաշրջման դեպքեր	18 Թերսնուցում
4 Ինֆլյացիա	9 Կոռուպցիայի վերահսկում	14 Մարդու իրավունքների ռոնտահարում	19 Մաքուր ջրի աղբյուրներից, սանիտարահիգիենիկ պայմաններից օգտվող բնակչության տոկոսը
5 Կարգավորման/հանրային, մասնավոր սեկտորի/ որակ	10 Ազատության վարկանիշներ	15 Հակամարտությունից տուժած տարածք	20 Կյանքի տևողություն

Վարկանիշային նախագծում երկրների թուլության կամ այլ կերպ ասած՝ ձախողվածության աստիճանակարգումը հիմնվում է մեթոդաբանական վեցաստիճան կառուցվածքի վրա, որը ենթադրում է նաև ընդհանուր ցուցանիշային կամ թվային դասակարգում (այն է՝ վատագույն ցուցանիշը 0,00-ն է, լավագույնը՝ 10,00-ն):

Աղյուսակ 2

*Պետությունների թուլության ընդհանուր կամ ամփոփիչ աստիճանակարգումը,*

*( ) փակագծերում նշվում է երկրի զբաղեցրած դիրքը*

Ցածրագույն սանդղակ/Bottom quintile	0,52-4,88 (1-28)
Երկրորդ սանդղակ	5,12-5,94 (29-56)
Երրորդ սանդղակ	6,07-6,72 (57-84)
Չորրորդ սանդղակ	6,78-7,61 (85-112)
Գագաթային սանդղակ/Top quintile	7,63-9,41 (113-141)

<sup>1</sup> Ենթացուցիչների վիճակագրությունը վերցված է այնպիսի հեղինակավոր միջազգային կազմակերպությունների վիճակագրական տվյալներից, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Ֆրիդրմ Հաուզը, Մենդի և գյուղատնտեսության կազմակերպությունը:

Պետությունների թուլության աստիճանակարգումը՝ ըստ ենթացուցիչների

Աստիճանակարգում	տնտեսական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն	ՀԱԵ
Ցածրագույն սանդղակ/Bottom quintile	0,00-5,04	0,00-3,09	0,00-6,01	0,00-3,89	100-460
Երկրորդ սանդղակ	5,05-5,78	3,1-4,50	6,02-7,43	3,90-6,33	470-1080
Երրորդ սանդղակ	5,78-6,33	4,51-5,50	7,44-8,09	6,34-8,34	1090-2430
Չորրորդ սանդղակ	6,33-7,06	5,51-6,63	8,10-8,54	8,35-9,40	2440-4420
Գագաթային սանդղակ/Top quintile	7,07-10,00	6,64-10,00	8,55-10,00	9,41-10,00	4430-11,000

Աղբյուրը՝ Brookings Institution. Global Economy and Development. Index of State Weakness in The Developing World\_2008

«Չարգացող աշխարհի թույլ երկրները» վարկանիշային նախագծում ընդգրկված առաջին երեք երկրները՝ Սոմալին, Աֆղանստանը և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, որոնց ցուցանիշը 141 երկրների շարքում վատագույնն է (բոլոր ցուցիչները գտնվում են ցածրագույն սանդղակում), նախագծի կազմակերպիչների կողմից անվանվում են *չկայացած երկրներ (Failed States)*: Ցածրագույն սանդղակի մնացած հատվածը, որտեղ ներառվել են 4-28 թվային սահմաններում ընդգրկված երկրները, *կրիտիկական թույլ երկրներն են* (հասկանալի է, որ ցածրագույն սանդղակը կազմված է վարկանիշային աստիճանակարգման երկու մասերից): Կրիտիկական թույլ երկրների շարքում, որը գլխավորում է Իրաքը, հիմնականում ընդգրկված են աֆրիկյան երկրները: Նշենք նաև, որ այս կարգում է ընդգրկված նաև Հյուսիսային Կորեան (*տե՛ս Աղյուսակ 5*):

Երկրորդ սանդղակը, որտեղ ընդգրկված երկրներն անվանվել են ուղղակի *թույլ երկրներ*, հետևաբար ունեն սոցիալ-տնտեսական, քաղաքական, անվտանգության առավել կայացած և կայուն ինստիտուտներ, գտնվում է 29-56 թվային տիրույթում: Այս կարգի տակ են ներառվել աֆրիկյան երկրներ, ինչպես նաև Պակիստանը, Կենտրոնական Ասիայի հինգ հանրապետություններից երեքը՝ Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, ինչպես նաև Կոլումբիան, Բանգլադեշը:

Երրորդ սանդղակում ներառված երկրներին (57-84 թվային տիրույթում), ըստ էության պետք է վերագրել զարգացող աշխարհի թույլ երկրների վարկանիշային աստիճանակարգի միջնամասային դիրք: Այս աստիճանակարգում ներառված են Ալժիրը, Ֆիլիպինները, Միրիան, Կուբան, ԱՊՀ երկրներից 4-ը՝ Ռուսաստանը, Ղրղզստանը, Ադրբեջանն ու Բելառուսը, ինչպես նաև Չինաստանը, Վենեսուելան և Իրանը (մանրամասն տե՛ս՝ *Աղյուսակ 4 և 5*):

Չորրորդ նախավերջին սանդղակում (85-112), որը վերջին՝ գագաթային սանդղակից հետո համարվում է լավագույն վարկանիշային աստիճանակարգը, ընդգրկվել են ԱՊՀ երկրներից՝ Մոլդովան, Ղազախստանը, Վրաստանը, Հայաստանն ու Ուկրաինան, ինչպես նաև Թուրքիան, Սերբիան, Ալբանիան: Վերջին սանդղակը, որը գլխավորում է Բոսնիա-Հերցեգովինան, ներառում է Մակեդոնիան, Խորվաթիան, Սլովակիան, Չիլին, Արգենտինան, Մեքսիկան, Ուրուգվայը, Հորդանանը, արևելաեվրոպական երկրներից՝ Բուլղարիան, Ռումինիան, Հունգարիան, նաև Լեհաստանը, մերձբալթյան երկրներից՝ Լատվիան ու Լիտվան:

*Աղյուսակ 4-ից* երևում է, որ Հայաստանն իր վարկանիշով (7.34 միավոր, 105-րդ դիրք), բացառությամբ Ուկրաինայի (7.38 միավոր, 107-րդ դիրք), գերազանցում է ԱՊՀ բոլոր երկրները: Այսպիսով, Հայաստանն ու Ուկրաինան իրենց վարկանիշներով ընդհուպ մոտ են արևելաեվրոպական երկրներից Ռումինիային (7.91 միավոր, 121-րդ դիրք), Բուլղարիային, Լեհաստանին, մերձբալթյան երկրներից՝ Լատվիային ու Լիտվային: Վրաստանը նույնպես բարձր ցուցանիշ է արձանագրել՝ ԱՊՀ երկրների շարքում ամփոփում է լավագույն եռյակը: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս վարկանիշային ցուցանիշը ԱՊՀ երկրների միջնամասում է (6.54 միավոր, 80-րդ դիրք): Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Թուրքիան իր վարկանիշով գերազանցում է թե՛ Ռուսաստանին, թե՛ Իրանին, թե՛ Չինաստանին: Նշենք

նան, որ Թուրքիան, արձանագրելով 7.18 միավոր և զբաղեցնելով 98-րդ դիրքը, ԱՊՀ երկրների շարքում զիջում է միայն Հայաստանին ու Ուկրաինային:

Ի տարբերություն Ռուսաստանի, Ադրբեջանի ու Բելառուսի, որոնք տեղակայված են երրորդ՝ միջնամասային աստիճանակարգում, Հայաստանը, Ուկրաինան, Վրաստանը՝ Մոլդովայի, Ղազախստանի ու Թուրքիայի հետ, ներառված են նախավերջին՝ չորրորդ սանդղակում (Ուկրաինան եզրափակում է չորրորդ սանդղակը):

Աղյուսակ 4

ԱՊՀ, մերձբայթյան, արևելաեվրոպական և այլ երկրներ, 2008թ.

դիրքը	երկիրը	ամփոփիչ վարկանիշ	տնտեսական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն	Մեկ շնչին ընկնող Համախառն ազգային եկամուտ
35	Թուրքմենստան	5,27	5,05	1,40	7,88	6,75	1700
36	Ուզբեկստան	5,30	5,20	1,78	6,66	7,54	610
42	Տաջիկստան	5,35	6,18	3,03	6,39	5,82	390
65	Ռուսաստան	6,20	7,14	3,81	4,83	9,04	5780
66	Իրան	6,25	5,51	3,32	6,91	9,28	3000
73	Ղրղրզստան	6,39	6,27	3,62	7,53	8,14	490
74	Չինաստան	6,41	6,89	3,69	6,85	8,21	2010
80	Ադրբեջան	6,54	7,85	3,36	7,06	7,89	1850
81	Բելառուս	6,63	6,57	2,31	8,24	9,41	3380
88	Մոլդովա	6,89	6,41	4,69	7,93	8,54	1100
89	Ղազախստան	6,92	7,43	3,59	8,33	8,31	3790
90	Վրաստան	6,99	6,58	5,66	7,15	8,58	1560
98	Թուրքիա	7,18	7,32	6,53	5,83	9,06	5400
105	Հայաստան	7,34	7,97	4,73	8,23	8,44	1930
107	Ուկրաինա	7,38	6,92	5,34	7,90	9,34	1950
121	Ռումինիա	7,91	7,91	6,77	8,42	8,54	4850
127	Բուլղարիա	8,38	8,05	7,21	8,61	9,64	3990
135	Լեհաստան	9,01	8,95	8,17	8,98	9,95	8190
136	Լատվիա	9,08	9,18	8,54	9,45	9,16	8,100
138	Լիտվա	9,27	9,33	8,44	9,63	9,69	7870
140	Հունգարիա	9,41	10,00	8,92	9,01	9,69	10950
141	Սլովակիա	9,41	9,95	8,68	9,32	9,68	9870

Աղյուսակ 5


Չարգացող աշխարհի թույլ երկրները (նշվում են առանձնացված երկրները), 2008թ.

դիրքը	երկիրը	ընդհանուր ցուցանիշը	տնտեսական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն	Մեկ շնչին ընկնող Համախառն ազգային եկամուտ
2	Աֆղանստան	1,65	4,51	2,08	0,00	0,00	271
4	Իրաք	3,11	2,87	1,67	1,63	6,27	1134
15	Հյուսիսային Կորեա	3,87	0,52	0,95	7,28	6,73	չի նշվում
33	Պակիստան	5,23	6,58	3,52	4,69	6,13	770
35	Թուրքմենստան	5,27	5,05	1,40	7,88	6,75	1700

դիրքը	երկիրը	ընդհանուր ցուցանիշը	տնտեսական	քաղաքական	անվտանգություն	սոցիալական բարեկեցություն	Մեկ շնչին ընկնող Համախառն ազգային եկամուտ
36	Ուզբեկստան	5,30	5,20	1,78	6,66	7,54	610
42	Տաջիկստան	5,35	6,18	3,03	6,39	5,82	390
62	Կուբա	6,17	3,60	2,94	8,28	9,88	չի նշվում
65	Ռուսաստան	6,20	7,14	3,81	4,83	9,04	5780
66	Իրան	6,25	5,51	3,32	6,91	9,28	3000
67	Հնդկաստան	6,28	6,72	6,72	4,87	6,79	820
73	Ղրղրզստան	6,39	6,27	3,62	7,53	8,14	490
74	Չինաստան	6,41	6,89	3,69	6,85	8,21	2010
80	Ադրբեջան	6,54	7,85	3,36	7,06	7,89	1850
81	Բելառուս	6,63	6,57	2,31	8,24	9,41	3380
88	Մոլդովա	6,89	6,41	4,69	7,93	8,54	1100
89	Ղազախստան	6,92	7,43	3,59	8,33	8,31	3790
90	Վրաստան	6,99	6,58	5,66	7,15	8,58	1560
98	Թուրքիա	7,18	7,32	6,53	5,83	9,06	5400
99	Բրազիլիա	7,22	6,12	6,42	7,32	9,01	4730
105	Հայաստան	7,34	7,97	4,73	8,23	8,44	1930
107	Ուկրաինա	7,38	6,92	5,34	7,90	9,34	1950
121	Ռումինիա	7,91	7,91	6,77	8,42	8,54	4850
127	Բուլղարիա	8,38	8,05	7,21	8,61	9,64	3990
135	Լեհաստան	9,01	8,95	8,17	8,98	9,95	8190
136	Լատվիա	9,08	9,18	8,54	9,45	9,16	8,100
138	Լիտվա	9,27	9,33	8,44	9,63	9,69	7870
140	Հունգարիա	9,41	10,00	8,92	9,01	9,69	10950

Աղբյուրը՝ *Brookings Institution. Global Economy and Development. Index of State Weakness in The Developing World\_2008*, [http://www.brookings.edu/reports/2008/02\\_weak\\_states\\_index.aspx](http://www.brookings.edu/reports/2008/02_weak_states_index.aspx)

Ֆրաֆիկ 1  
Հայաստանի վարկանիշը այլ երկրների շարքում, 2008թ. ըստ վարկանիշային աստիճանակարգման



## ***Հիմնական եզրակացություններ***

«Զարգացող աշխարհի թույլ երկրները» վարկանիշային նախագծում Հայաստանի վերաբերյալ, որպես հիմնական հետևություն, կարելի է առանձնացնել այն հանգամանքը, որ այն իր վարկանիշով ընդգրկվել է պետությունների թուլության աստիճանակարգման համար առանձնացված հնգաստիճան համակարգի չորրորդ սանդղակում, որը նույնպես համարվում է լավագույն ցուցանիշ: Հայաստանի բարձր վարկանիշը հաստատող մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ վերջինս իր վարկանիշով, բացառությամբ Ուկրաինայի, գերազանցում է ԱՊՀ անդամ մյուս պետությունների ցուցանիշները: Հայաստանին զիջում են հարևան մյուս երկրները՝ Իրանն ու Թուրքիան: Անհրաժեշտ է նշել նաև, որ ի տարբերություն ԱՊՀ անդամ այլ պետությունների՝ Հայաստանը (ինչպես նաև Ուկրաինան) այս նախագծի արդյունքների համաձայն՝ իր վարկանիշային արդյունքներով ընդհուպ մոտ է գտնվում արևելաեվրոպական երկրներից Ռումինիային, Բուլղարիային, որոնք արդեն ընդգրկվում են վերջին բարձրագույն աստիճանակարգում:

***Կարեն Վերանյան***  
***«Նորվանք» հիմնադրամ***

«Ջարգացող աշխարհի թույլ երկրները» վարկանիշային նախագիծը կարող ենք համեմատել նաև «Ֆորին փոլիսի մեգրզինի» և «Դը ֆանդ ֆոր փիսի» պատրաստած «Չախողված երկրների ինդեքսը» (Failed States index)<sup>1</sup> վարկանիշային զեկույցի հետ (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Չախողված երկրներ, ԱՊՀ և մերձբայթյան երկրներ

դիրք	երկիր	Ցուցիչները (Ց)												Ցուցիչները (Ց)
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
<b>ԱՊՀ երկրներ</b>														
22	Ուզբեկստան	7.7	5.4	7.1	7.1	8.6	7.5	9.2	6.8	9	8.9	9.2	7	<b>93.5</b>
39	Տաջիկստան	7.7	6.1	6.3	6.4	7.3	7.3	9	7.3	8.6	7.8	8.8	6.1	<b>88.7</b>
41	Ղրղզստան	7.5	6.2	6.8	7.4	8	7.5	8.2	6.3	7.9	7.9	7.5	7	<b>88.2</b>
43	Թուրքմենստան	7	4.5	6.2	5.6	7.3	7.4	9	7.7	9.6	8.5	8.2	6.5	<b>87.5</b>
48	Մոլդովա	7	4.7	7.3	8.4	7.5	7.5	7.9	7.1	6.8	6.3	7.5	7.7	<b>85.7</b>
51	Բելառուս	8	4.6	6.5	5	7.5	6.8	9.1	6.9	8.5	6.7	8.5	7.1	<b>85.2</b>
58	Վրաստան	6.3	6.8	7.6	5.7	7	5.7	7.9	6.1	5.4	7.8	7.8	8.2	<b>82.3</b>
62	Ռուսաստան	7.5	5.9	7.7	6.5	8.2	3.9	7.6	6.2	8.5	6.8	8.5	3.9	<b>81.2</b>
62	Ադրբեջան	6	7.5	7.3	5.3	7.4	6.3	7.8	6	6.4	7.2	7.5	6.5	<b>81.2</b>
103	Ղազախստան	5.7	3	5.2	4	6.2	6.6	7.5	6.1	7	6.7	7.7	6.6	<b>72.3</b>
106	Ուկրաինա	6.5	3.6	7	7.5	7	5	7.5	4.5	5.9	3	7.9	6	<b>71.4</b>
112	Հայաստան	5.8	7.6	5	6.9	6	5	6.5	6.2	5.5	4.5	5.8	5.5	<b>70.3</b>
<b>Մերձբայթյան երկրներ</b>														
135	Լատվիա	5.2	5.7	4.6	5	7	5.8	4.7	4	3.8	2.2	4.4	4.3	<b>56.7</b>
140	Էստոնիա	4.8	4.8	4.5	4	4.9	3.7	5	3.8	3.7	2.1	5.9	3.3	<b>50.5</b>
143	Լիտվա	5.4	3.4	3.5	5.4	6.2	4.5	4.2	3.7	3.7	2	3	4	<b>49</b>

Չախողված երկրները դասակարգվել են հետևյալ 12 ցուցիչների հիման վրա

№	Ցուցիչներ
<i>սոցիալական ցուցիչներ</i>	
1.	ժողովրդագրական ազդեցություն
2.	փախստականների և ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ
3.	դժգոհ զանգվածների գործոն
4.	քրոնիկական և կայուն բնույթ կրող մարդկային ռեսուրսի արտահոսք
<i>տնտեսական ցուցիչներ</i>	
5.	հասարակական խմբերի միջև տնտեսական զարգացման անհավասարություն
6.	կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում
<i>քաղաքական ցուցիչներ</i>	
7.	պետության քրեականացում և/կամ ապալեգիտիմացում
8.	պետական գործառույթների շարունակվող վատթարացում
9.	մարդու իրավունքների համատարած խախտում
10.	անվտանգության կառույցների ուժեղացում. նրանց հանդես գալը որպես պետություն պետության ներսում
11.	կյանային վերնախավերի ազդեցության մեծացում
12.	օտար երկրների միջամտություն կամ արտաքին գործոններ

<sup>1</sup> «Ֆորին փոլիսի մեգրզինի» և «Դը ֆանդ ֆոր փիսի» պատրաստած չախողված երկրների ինդեքսը վերաբերում է 2007-ին:



Զեկույցում նշված երկրների դասակարգումը հիմնված է վերոնշյալ 12 ցուցիչների ընդհանուր գումարային տվյալների վրա: Յուրաքանչյուր ցուցիչի համար ընտրված է վարկանիշային 0-10 տիրույթը, որտեղ 10-ը համարվում է բարձրագույն՝ բացասական կետը, 0-ն՝ ցածրագույն՝ լավագույն կետը:

2007թ. զեկույցում ներառված 177 երկրները բաժանված են 4 խմբերի՝ ըստ երկրների ձախողվածության աստիճանի.

1. Ահազանգող ինտենսիվության երկրներ (վատագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը գտնվում է 90-120 միավորների միջև):
2. Նախազգուշացնող (60-89.9):
3. Միջին (30-59.9):
4. Կայուն (լավագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը գտնվում է 0-29.9 միավորների միջև):